

1774

ՊԱՏՃԱՌԸ
ԹԷ ԻՆՉՈՒՒ



Գրեց Ր. Ա. Լ.

20

Լ-33

արգմանեց

. Ս. Թ.

ՀՈԳԵԻՈՐ ԺՈՂՈՒՆԵՐ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻՆ, ՄԷՋ
Ամէն կրօնիկէ; Կ. ա. 8.30ԻՆ
44, Նաւա Ժակիպալա

ԵՐԿՈՒ ԽՕՍԻ

Մր. Բ. Ա. Լէյսյօ Նոր Զեյանսայի նշա-
նաւոր եւ ուսնայ առեւտրականներէն մէկն է:
Իր ձիւրերն եւ յարսեւ աշխատութեան
շնորհիւ՝ ո՛չ միայն ընդարձակ գործ մը հիւ-
նած է, այլ որպէս անկեղծ եւ քաջարի
Քրիստոնեայ ախոյան մը՝ մեծ հաճոյքով Իր
Տիրոջ ծառայած է, եւ կը ծառայէ:

Հոգիներու փրկութեան համար իր ու-
նեցած խոր տեսչակով զինք առաջնորդած է
այս զրոյցը գրելու իր պաշտօնականներուն՝ որ
անոնք ալ Փրկիչը ընդունելու նըշանկու-
թիւնը ունեւան:

Մր. Լ. Ուոլս խոր բաղձանքով՝ մեկ ալ
յոյս կ'ընծայենք Հայերէնի սոյն քարգնա-
նութիւնը՝ որ արդէն իսկ 18 արքեր լեզու-
ներու քարգնանում եւ ունեցած է մօտառ-
տայէս 7 միլիոն ապառու:



24561-59

20
L-33

03 AUG 2009

ՊԱՏՃԱՌԸ ԹԷ ԻՆԶՈՒ

ԵՆԹԱՐԻՆԵՒ ԹԷ մարդ մը բարեկամի մը
նուիրեց 100 ոսկի արժողութեամբ ա-
զամանդեայ մատանի մը, զոր գոհարա-
վաճառէն ձրի ստացած Թաւիշէ փոքրիկ
տուփի մը մէջ տեղաւորած էր: Ար-
տառոց բան մը պիտի չըլլա՞յ, երբ նա
քանի մը օր յետոյ բարեկամին հանդիպած
ատեն սա խօսքերը լսէ. «Ո՛հ, ձեր զրկած
Թաւիշէ տուփը շա՛տ սիրուն է, անոր ա-
մէն խնամք պիտի տանիմ: Զեզ կը խօս-
տանամ թէ՛ զայն ծրարելով ապահով տեղ
մը պիտի պահեմ որ բնաւ վնաս չկրէ»:

Այսպիսի բանի մը կարելիութիւնը
մտածելն իսկ ծիծաղելի է: Սակայն ճիշտ

նոյնքան յիմարական չէ՝ որ այրեր և կրներ
կը վառեն իրենց բոլոր ժամանակն ու
խորհուրդը՝ լոկ իրենց մարմնին վրայ.
բանի մը՝ որ նման արկղի կը պարունակէ
բուն անձը, հոգին, այն թանկագին գո-
հարը՝ որ համեմատական արժէքներու հա-
մայն գիտութիւնը ունեցող Յիսուս Քրիս-
տոս, այնքան բարձր կերպով գնահատեց
զայն որ՝ յարմար նկատեց իր անձը անոր
քառութեան յատկացնել: Մինչդեռ այդ
նոյն բանը արդեօք վարկեան մ'իսկ ձեր
միտքը կ'զբաղեցնէ՝:

Խնդրեմ, պիտի ուզէի՞ք ինձ տալ ձեր
խոր և ամէն բանէ աւելի՝ անկեղծ ուշադ-
րութիւնը: Դարձեալ, կ'ուզէ՞ք հաւա-
տարիմ գանուիլ ձեր ներկայ և ապագայ
կեանքի նկատմամբ՝ մինչ կը կարգադրէ այս
տողերը: Ուրեմն մի՛ ձգէք այս դրքոյկը
մէկ կողմ մինչեւ չբացնէք անոր վերջին
էջը, ինչու որ ձեր ժամանակը ներ-
կայ վարկեանն է: Եթէ ատեւաու-
րի մէջ «Թեոփիլոս մեր ժամանակի դուին է»,

հոգեկան խնդիրներու մէջ ալ ան ե-
ղած է՝ և պիտի ըլլայ միլիոններու յաւի-
տենական բարօրութեան միլիոնոյն դողը:
Սակայն զարմանալի չէ՝ սեանել երի-
տասարդներ, երիտասարդուհիներ, այրեր,
կրներ, թէև մտացի ու խոհեմ շատ բանե-
րու մէջ, բայց անձերնին կը վառնգեն՝
ինքնասպանութեան սա չքմեղսնքով թէ՝
«Շատ ժամանակ կայ», և կը յետաձգեն
այս կենսական հարցը: Նայեցէ՛ք թէ՝
ժամանակին ինչեր վերապահուած են:

Խօսեցէ՛ք երիտասարդի մը յաւիտե-
նական կեանքի մասին, որուն մենք ամենու
ալ կ'շտապենք, և նա պիտի ըսէ. «Շատ
ժամանակ կայ»: Նոյնպէս կը պատաս-
խանէ չափահասը. «Տակաւին շատ ժա-
մանակ կայ»: Ալեփառ ծերունին՝ որուն
մէկ ոտքը գերեզմանին մէջ է, դողդոջուն
ձայնով ա՛ն ալ կը շեշտէ. «Իե՛ս ժամա-
նակ կայ»:

Եթէ կրնայինք ստուգիլ լման ըմ-
բռնել՝ այն ահարկու հրէշին — Մահուան —



անագործին ոյժը՝ մեր դիրքը բոլորովին պիտի փոխուէր անոր հանդէպ։ Ահաւասիկ կարգ մը թուանշաններ՝ զոր գրի առի անցեալ իրիկուն։ Միջին հաշուով աշխարհի բնակչութիւնն է 1,800,000,000։ Մարդուն միջին տարիքն է, ստուգուած կեանքի ապահովագրական ընկերութեանէ մը, 40 տարիէն քիչ մը պակաս։ Այս հաշուով վերի գումարին քառասուներորդը, այսինքն 45 միլիոն անձ կը մեռնի ամէն տարի. 123,287 ամէն օր, 5,137 ամէն ժամ, 85 ամէն վարկեան—ժամացոյցի մէն մի երկվարկեանի զարկին մէկէ աւելի հոգիներ յաւիտենականութիւն կ'անցնին։

Խորհեցէ՛ք վարկեան մը այս մտախն։ Ամէն օր բազմամարդ քաղաք մը յաւիտենականութիւն կը փոխադրուի։ Երանի թէ ասոր լման նշանակութիւնը կրնաք ըմբռնել՝ թէ մինչ 25 ըսպէ կ'սպառէք դրքոյկիս էջերը կարգալու, 2,125 հոգի դացած կ'ըլլան իրենց Աստուածը դիմաւորելու։

Ժամանակն է թանկ, բայց կ'անցնի, "Մահն է ստոյգ շուտ կ'երեւի.
Բնկեր, անհոգ ըլլա՞ս պիտի
Մինչ կեանքն ու մահ դիմեն քեզի։

Տասներկու տարեկանիս, մահը զօրաւոր ազդեցութիւն մ'ըրաւ վրաս։ Ան մտաւ մեր տունը և խեց սիրելի մեծ մայրիկս, որ զիս խնամած և հոգացած էր մանկութեան օրերուս։ Կը յիշեմ թէ ինչպէս կը դիտէի անոր սիրելի վեհ դէմքը՝ մինչ նէ հոն կը պառկէր անշարժ, գունատ, և մարմարի նման պաղ։ Այդ առթիւ զգացի որ ես ալ օր մը ճիշտ անոր նման պիտի ըլլայի՝ ցո՛ւրտ ու անշունչ, և զիտէի թէ անպատրաստ էի այդ օրը դիմաւորաւելու։

Բայց այսօր պատրաստ եմ, ո՛չ թէ իմ ճիգերուս ու բարի գործերուս շնորհիւ, այլ միայն անոր համար որ կը հաւատամ թէ՛ Տէր Յիսուս մեռաւ զիս մեղքերէս ազատելու՝ և յարութիւն առաւ զիս արդա-

բացնելու համար: Արդ պիտի ջանամ
կարելի եղածին չափ պարզօրէն ձեզ բացա-
րել թէ՛ ինչո՞ւ ընդունած եմ Տէր Յիսուսը
որպէս Փրկիչս:—

Ա. Որովհետեւ Աստուած մը կայ:

Բ. Որովհետեւ «Մարդոյ աստեանում է
մէկ անգամ մեռնիկ, ու անկէ ետքը
դասասան»:

Գ. Որովհետեւ ես մեղաւոր մըն եմ:

Դ. Որովհետեւ Աստուծոյ փրկագործու-
թեան ծրագիրը՝ գոհացում կուսայ
քէ՛ արհաւ եւ քէ՛ տրանսպսնութեան:

ԻՆՉՊԷՍ ԳԻՏԵՄ ԹԷ ԱՍՏՈՒՍԾ ՄԸ ԿԱՅ
Արդհետեւ, բնածին համոզում մ'ունիմ
Անոր գոյութեան նկատմամբ: Խնդիր չէ
թէ՛ բանականութիւնս ո՛րչափ ջանաց
Աստուծոյ գոյութիւն չունենալը փաստե-
լու պատճառներ յառաջ բերել, կամ թէ՛
ինչպէ՛ս զգացումներս կը ձգտէին նոյն բա-
նին հաւատալ, բայց կրկին ու կրկին ինձ
եկաւ այն «մեղմ ձայնը», ճիշտ ինչպէս

ձեզի ալ եկած է լռութեան մէջ, երբ հա-
ճոյքի գրգիռը ալ անցած է:— այո՛, գի-
տէի թէ՛ գէթ ինձ համար Աստուած մը
կար: Ապա նայեցայ տարբեր վիճակնե-
րու և տարբեր կարգերու մէջ եղած մար-
դոց կեանքին, և տեսայ թէ՛ անոնք տա-
կաւին կը փնտռէին բազմատեսակ կերպեր
ու կրօններ, ինչպէս բոլոր պատմութեան
մէջ, գոհացում տալու այդ նոյն մեղմ ձայ-
նին՝ որ իմ սրտիս մէջ ալ կը թրթռար:

Բայց կան մարդիկ որ Աստուծոյ չեն
հաւատար: Ուստի նկատի առնենք այս
խնդիրը որքան որ մեր կարողութիւնը կը
ներէ: Ենթադրենք թէ՛ ձեզի հետ
նաւամատուցը կեցած ենք, որուն կը
մօտենայ ովկիանոսի մեծ շոգենաւերէն
մէկը, և ես ձեզի կ'ըսեմ. «Շատեր կը խոր-
հին թէ՛ այս շոգենաւը արդիւնքն է մէ-
կուն շատ զգուշութեամբ շինած յատա-
կադին, բայց ես աւելի ստոյգը գի-
տեմ: Անոր վրայ մտային ունէ ճարտարու-
թիւն երբեք չիկայ: Երկաթը տեսակ մը

խորհրդաւոր վիճակներէ անցնելով հողէն դուրս եկաւ և թերթերու ձեւ առաւ, ապա՝ տակաւ առ տակաւ անոր եզերքներէն ծակեր բացուեցան, յետոյ ծայրոյր գամեր երեւցան և երկու կողմերուն վրայ տափակցան։ Երկար ժամանակ այս գործողութիւնը շարունակուելով՝ մեքենաները իրենց տեղերը գտան, և օր մը կարգ մը մարդիկ ծովեզրին վրայ կեցած տեսան թէ՛ ան հանդարտօրէն կը սահէր դէպի ծովուն սպահով խորշը։

Դուք զիս ապուշ մը պիտի կարծէիք հաւանաբար, և իմ անիմաստ շողակրատութենէս խոյս տալու համար՝ շուտով պիտի հեռանայիք ամբոխին մէջ։ Ինչո՞ւ, որովհետեւ գիտէք թէ՛ ուր յօրինուածք մը կայ՝ հոն ըլլալու է յօրինող մ'ալ, և քանի որ տեսած էք մարդկային մտքի տարբեր արտադրութիւններ ևս, ինչպէս խնդրոյ առարկայ եղած նաւը, պիտի մերժէիք հաւատալ թէ՛ ան ծրագրուած չէր մարդկային ուշիմութեամբ՝ և յօրինուած

անոր ճարտարութեամբ։

Սակայն կան մարդիկ որ առանց յիմարներ նկատուելու, մեզի կ'ըսեն թէ՛ արեգակնային դրութիւնը պատահմամբ յեղաշրջեցաւ իր միդամածային վիճակէն։ Այսինքն, ան խորհրդաւոր բարեշրջումի արդիւնք է, և ոչ թէ բարձրագոյն բանականութեան։ Անոնք կ'ըսեն թէ՛ Աստուած մը չեն ճանչնար այլ բնութիւն մը, թէ և օրուան մեր խոհեմ աշակերտները համոզուած են որ Աստուած բնութենէն գերազանց է, այսինքն, Նա Ինքզինք կը յայտնէ համայն բնութեան մէջ՝ որով անոր օրէնքները և սկզբունքները իր զօրութեան արտայայտութիւններն են, բայց Նա էականապէս աւելի է քան բոլոր անոնց հաւաքականութիւնը։ Անոնք մեզի կը հրամցնեն ծրագիր մը՝ առանց ծրագրողի, ստեղծագործութիւն մը՝ առանց ստեղծիչի, արդիւնք մը՝ առանց պատճառի։ Իսկ այս անելէն խուսափելու համար կ'ըսեն թէ՛ եթէ Աստուծոյ կը վերագրէք

«սկզբնապատճառը»՝ ըսէք թէ՛ ո՛վ ըրաւ զԱստուած: Այսպիսի հարց մը ինքզինք կը հակասէ, որովհետեւ սա ընդունուած ճշմարտութիւն մ'է թէ՛ ո՛չ մէկ պատճառ կրնայ ստեղծել սկզբնական պատճառը, եթէ ոչ՝ սկզբնական պատճառը կ'ըլլայ երկրորդական, որը թուաբանական անլուծելի խնդիր մը կ'ըլլայ:

Ամէն լուրջ անհատ կը հաւատայ պատճառներու և արդիւնքներու շարանի մը՝ որ երեւան կուգայ բնութեան մէջ, որովհետեւ մէն մի արդիւնք պատճառ մը կը հանդիսանայ յաջորդին:

Ասոր իրողութիւն մ'ըլլալուն հաւատալը կ'ստիպէ մէկը հաւատալու թէ՛ պատճառներու առդիւնքներու յաջորդականութեան սկիզբ մ'ըլլալու է, այսինքն առաջին արդիւնք մը՝ երբեք չի կրնար գոյութիւն ունենալ առանց առաջին պատճառի: Այս սկզբնական պատճառը՝ ըստիս Աստուած է, և որովհետեւ չենք կրնար ըսել թէ՛ ուրկէ կուգայ Ակզբնական Պատճառը՝ ուրեմն Ա-

նոր գոյութիւնը ուրանալ արամաբանական պիտի ըլլայ, — երբեք, եթէ ոչ հակաճառութեան համար ես ալ նոյն չափով իրաւունք պիտի ունենամ ուրանալու աշխարհի գոյութիւնը, որ արդիւնքներու նոյնիսկ մէկ միջիտներորդը չէ: Կը տեսնէ՞ք, եթէ ընդունիմք միայն պատճառ մը որ գոյութիւն ունի՝ այդ եզրակացութեամբ կ'առաջնորդուիմք Ակզբնական Պատճառին:

Գիտենք թէ՛ երեքորականութիւնը ինչպէս ինքզինք կը յայտնէ, և դառնաւ են շատ մը օրէնքներ որ զայն կը կառավարեն. սակայն մեծագոյն գիտնականն իսկ անկարող կը մնայ զայն որոշապէս բացատրել: Բայց ինչո՞ւ անոր կը հաւատանք, որովհետեւ ամէն օր կը տեսնենք անոր գոյութեան նշանները մեր փողոցներուն մէջ: Թէ և չեմ գիտեր թէ՛ Աստուած ի՞նչպէս յաւիտենից ի գոյ է, բայց Անոր պէտք է հաւատամ, որովհետեւ միշտ իմ շուրջն կը տեսնեմ Անոր արտայայտութիւնները:

Փրոֆ. Տրմմընտ Մարդուն Բարձրացումը՝ գրքին մէջ կ'ըսէ. «Բարեշրջումը Ստեղծող Զեռք մը չի ջնջէր, այլ կը պահանջէր զայն: Բոլոր վարկածները փոխանակ Ստեղծագործութիւնը հակասելու զայն կռահելով կ'սկսին»: Ուայզմէն կ'ըսէ. «Բնութեան օժանդակ ուժերուն ետեւ, որոնք նպատակ մը կը հետապնդեն, մենք ընդունելու ենք պատճառ մը՝ զոր իր բնութեան մէջ անըմբռնելի է, և որուն մասին միայն մէկ բան կրնանք ըսել որոշապէս, թէ՛ նա աստուածային է»:

Իրաւադէտ Տր. Լ. Ֆիսք, կ'ըսէ. «Կարգ մը բաներու մասին կրնանք տարակուսիլ, իսկ Աստուծոյ մասին անստուգութիւն չի կրնար ըլլալ: Նա է Անհուն, Բացարձակ, Անպայման, Յաւիտենական և Սկզբնապատճառ: Նա անհամկնալի չէ, նոյնատեն անըմբռնելի է: Մենք զԱյն կը դանենք, բայց չենք կրնար ըմբռնել: Անոր անհուն էութիւնը չենք կրնար խորահասել՝ սակայն բանականութիւնը կը

յայտարարէ զԱյն ստեղծիչ կեանքը ծնունդ առած համայն ստեղծագործութեան: Անոր գոյութիւնը հասկնալով և ընդունելով՝ կը համինք խորհուրդներու է՛ն բարձրագոյն դասին: Ամէն բան վերագրելու ենք և պէտք է վերագրենք Անհունս Իմաստուն եղող Արարչի կամքին:

Հաւնդուած ըլլալով քէ Աստուած մը կայ, յաջորդ քայլը կ'առնենք: Ես չեմ կրնար ըսել թէ Իմաստուն մէկը՝ առանց նպատակի բան մը կ'ընէ: Եթէ մէկը կօշիկ կը շինէ, հագնելու կամ ծախելու համար է, եթէ հաց կ'եփէ՝ իր կամ ուրիշ մէկուն ուտելուն համար է: Ամէն գործի ետեւ շարժառիթ մ'ըլլալու է: Երբ այս մասին խորհեցայ՝ ինծի բոլորովին տրամաբանական թուեցաւ թէ Աստուած նպատակ մը ունենալու էր երբ ստեղծագործութիւնը երեւան բերաւ:

Աշխարհի պարունակած բոլոր գիրքերուն մէջ՝ միայն մէկ հատ կայ որ հրապարակ իջած է որպէս ուղղակի յայտնութիւն

այս Աստուծոմէն, և մեզի կը պատմէ Անոր էութեան ու մեր հանդէպ ունեցած Անոր նպատակներուն մասին: Այսպիսի ծանրակշիռ վերագրում մը, բնականաբար արժանի՝ է մի քիչ խուզարկութեան: Ուստի Ֆրանսիս Պէյքընի թելադրութեան համաձայն, ոչ ընդունիլ և ո՛չ մերժել, այլ կշռելով և նկատողութեան առնելով մօտենանք այս գրքին՝ որ զարմանալի յայտարարութիւններ կ'ընէ:

Բայց մեր օնձին և այս գրքին հաւատարիմ մնալու համար, դայն ամբողջութեամբ կարդալու ենք: Ինչո՞ւ է մէկը որպէս դատաւոր՝ իր գաղափարը չի յայտնել, երբ խնդիրը միայն մասամբ լուծած է, նոյնը ընելու ենք մենք: Գատաւորին նման պէտք է բաղդատենք վիաներուն փաստերը և կշռենք ամէն բան որպէսզի կարող ըլլանք ոչ թէ մտկերեսային իմաստը առնել, այլ անոր խորունկ նշանակութիւնը գտնել: Բնականաբար անոր ըրած յայտարարութեանց կարեւորու-

թիւնը՝ կ'արդարացնէ անոր սերտութեան յատկացնելիք հարկ եղած ժամանակը: Ան կը պարունակէ 66 գրքեր, որոնք գրուած են առնուազն 40 տարբեր հեղինակներէ, ոմանք ուսեալ՝ ուրիշներ աւուս, ոմանք թագաւոր՝ ուրիշներ ղեղձուկ: Անոր գրութեան ժամանակաշրջանը եղած է 1600 էն աւելի տարիներ: Գրուած տեղերը կը տարածուի Բաբելոնէ Հռովմ, Ասիայէ Եւրոպա: Այսպիսի աշխատանքներէ՝ հակասական ասացուածներու աշխատեալ հաւաքովի մը սակաւ տեղ՝ անոր մէջ գտնել միաձոյլ վիճակ մը, որով իւրաքանչիւր մաս յաշորդին լրացուցիչը հանդիսանայ, հիացումի մէջ կը թողու մեզ: Այս պարագան տակաւ առ տակաւ ինձ ընդունիլ տուաւ Բ. Պետ. Ա. 21 ի ճշմարտութիւնը, եթէ ո՛չ, արամաբանական տարբեր բացատրութիւն չի կրնար տրուիլ խնդրոյն: «Աստուծոյ սուրբ մարդիկը Սուրբ Հոգիէն շարժուած խօսեցան»: Հաւատքս աւելի հաստատ-

ուեցաւ երբ սերտեցի Հին Կտակարանի մարգարէութիւնները՝ որոնք նոյնիսկ տառացիօրէն կատարուած են հարիւրաւոր տարիներ յետոյ: Եսայի մարգարէութեան 53րդ գլուխը որ կը նախատեսէ Գրիստոսի մահը այնքան մանրամասնութեամբ, խաչելութենէն 700 տարիներ առաջ գրուած է: Այո՛, Ս. Գրքին կասկածելու դժուարութիւնները՝ ինծի աւելի մեծ թուեցան քան հաւատալու: Անձիս անկեղծ մտալու համար հարկադրուեցայ ընդունիլ թէ՛ սխալը բոլորովին անհաւատներու կողմն էր: Աւելի հեռուն երթալով պիտի ըսեմ, «կը հաւատամ թէ՛ այս գիրքը կենդանի Աստուծոյ խօսքն է», թէ ո՛չ ուրիշ բանի մը չեմ կրնար վերագրել զայն:

Սակայն այսպէս ընդունիլով զիս բերաւ ծանր դժուարութեան մը առջեւ. որովհետեւ այս գիրքը արդարութեան չափանիշ մ'ունի՝ որուն ես հասած չէի, իսկ այդ չափանիշէն բոլոր պակաս մնացածը մեղք կը համարէ: Բանի որ Աստուած գիտէ

ձեր բոլոր գաղտնիքներն ու յղացած բոլոր խորհուրդները, ձեզ իր չափանիշով կը չափէ: «Բու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ, և քու բոլոր անձովդ ու քու բոլոր մտքովդ: Այս է առաջին ու մեծ պատուիրանքը» (Մատթ. ԻԲ. 37):

Հայելիի մը մէջ ուշադրութեամբ ձեր աչքերը դիտելէ յետոյ կրնա՞ք ըսել թէ՛ դուք գիտե՞ք որ յաւիտեանս ապահով էք, ինչու որ ձեր թոյլ կեանքի ընթացքին՝ կատարելապէս ապրեցաք վերը յիշուած չափանիշին համաձայն: Զայն դարձեալ կարդացէք. «Բու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ և քու բոլոր անձովդ ու քու բոլոր մտքովդ»: Եթէ կրնաք «Այո՛» ըսել, ձեզի պէտք չիկայ գրքոյկիս մնացած էջերը կարդալ, որովհետեւ ձեզի համար արժէք չեն ներկայացներ, թէեւ անոնք կենսական հետաքրքրութիւն ունին Աստուծոյ տուած չափանիշէն պակաս մնացած ոեւէ մարդու, կնոջ, տղու կամ աղջկան համար:



Սակայն լուրջ խորհեցէք, որովհետեւ Աստուած կ'ըսէ Հռով. Գ. 23 ին մէջ. «Ամէնը մեղք գործեցին և Աստուծոյ փառքէն պակասած են»։ Անկեղծ եղէք զձեզ, տսրկաւ ձեզի համար մեծ արժէք ունի։

Տր. Բ. Թօրի կ'ըսէ. «Գիշեր մը Շիքակոյի մէջ կը քարոզէի, քարոզէն վերջ, եկեղեցիին հովիւը քովս գալով ըսաւ. 'Երիտասարդ մ'ունիմ' Ժողովուրդին մէջ որ կը փափաքի քարոզիչ ըլլալ, պիտի խնդրէի որ հետը խօսակցութիւն մ'ունենայիք'։ Ըսի իրեն. 'Ժողովուրդին ցրուելէն վերջ հոս բեր', և նա երիտասարդ բերաւ։ Ան ունէր այնպիսի մաքուր, սիրուն, և պայծառ դէմք մը՝ որուն նմանը տեսած չէի կեանքիս մէջ։ Անոր նայելով ըսի. —

— Ձեր հովիւը կ'ըսէ թէ՛ կը փափաքիք քարոզիչ ըլլալ, այնպէ՞ս է։

— Այո՛, կը փափաքիմ։

— Լաւ՛, ձեզի հարցում մ'ընեմ, դուք Գրիստոնեայ մըն էք։

— Անշուշտ Գրիստոնեայ մըն եմ, ես Գրիս-

տոնեայ մեծցուած եմ և ծնողքիս տուած կըթուլթեւէն երբեք պիտի չշեղիմ։

— Վերստին ծնա՞ծ էք։

— Ինչ

— Կ'ըսեմ թէ՛ երբեք վերստին ծնա՞ծ էք։

Աստուած կ'ըսէ. «Եթէ մարդ մը նորէն չծնանի, չկրնար Աստուծոյ թաղաւորութիւնը տեսնել»։ Դուք նորէն ծնա՞ծ էք։

— Ձեմ հասկնար թէ՛ ի՞նչ բանի մասին կը խօսիք։ Բոլոր կեանքիս մէջ բնաւ այդ մասին լսած չեմ։

— Նայեցէք բարեկամս, գիտէ՛ք թէ դուք մարդու մը դարձած ամենամեծ մեղքը դարձած էք։

— Ո՛չ, այդպիսի բան մը երբե՛ք ըրած չեմ մինչեւ այսօր։ Դուք զիս չէք հասկնար։ Ես շատ զգուշութեամբ մեծցուած եմ։ Կեանքս օրինակելի բարձր կեանքերէն եղած է։ Ես բնաւ դարձած չեմ ամենամեծ մեղքը որ մարդ մը կրնայ գործել։

- Ինչ կը խորհիք, ո՛րն է մեծագոյն մեղքը
զոր մարդ մը կրնայ գործել:
- Անշուշտ մարդասպանութիւն:
- Դուք բոլորովին սխալած էք: Կը հա-
ճի՞ք այդ մասին կարդալ Բրիտոսի
ըսածը: «Ս. Գիրքս աննելով բացի
Մատթ. Իբրդ. Գլուխը և խնդրեցի որ
կարդայ 37, 38 հոմարները: Նա
սկսաւ կարդալ հետեւեալ սողերը»,
«Եւ Յիսուս ըսաւ անոր, քու Տէր Աստ-
ուածդ սիրես քու բոլոր սրտովդ, և քու
բոլոր անձովդ, ու քու բոլոր մտքովդ:
Այս է առաջին ու մեծ պատուիրանքը»:
Հարցուցի անոր. —
- Ո՞ր պատուիրանքն է այս:
- Առաջին և մեծ պատուիրանքը:
- Եթէ այս է առաջին և մեծ պատուի-
րանքը, որո՞ն է առաջին և մեծ մեղքը:
- Չայն հպահելը:
- Չայն պահած էք: Սիրած էք զԱստ-
ուած ձեր բոլոր սրտով, բոլոր հոգիով և
բոլոր մտքով: Դարձեալ, ամէն բանի

- մէջ նախապատուութիւնը Աստուծոյ
տուած էք, գործի, քաղաքական խն-
դիրներու, հաճոյքներու, ուսման և ու-
րիշ ոեւէ բանի մէջ:
- Ո՛չ տէր, ըրած չեմ:
- Ուրեմն ի՞նչ ըրած էք:
- Այս պատուիրանքը կոտրած եմ:
- Ո՞ր պատուիրանքն է այդ:
- Առաջին և մեծագոյն պատուիրանքը:
- Ուրեմն ի՞նչ ըրած եղաք այդ կերպով:
- Աստուծոյ ամենամեծ ու առաջին պատ-
ուիրանքը կոտրեցի, որով մարդու մը գոր-
ծելիք է՞ն մեծ մեղքը գործած եղայ: Բայց
նախապէս այս մեծ մեղքը բնա՛ւ չտեսայ:
- Եւ դուք ընթերցող, այս երիտասար-
դին նման մարդու մը գործելիք ամենա-
մեծ մեղքը գործած էք, թէեւ դուք ալ
անոր նման կրնաք նախապէս չգիտցած
ըլլալ այս բանը:
- Այսպէս ես ալ մեղանշած ըլլալս ընդու-
նելով, ինչպէս յաճախ կը պատահի, ա-
ռաջնորդուեցայ մեծ գթուարութեանց: Աս

կայն որքա՛ն մոլթ ըլլայ ամալը՝ անոր մէջէն կը յառաջանայ անկեղծութեան ուղին, և մենք վստահ ենք թէ՛ ան է ամենակարճ ճամբան միւս կողմ դռնուած լոյսին։

Մեղանշումի այս համոզման վրայ, անմիջապէս մէջտեղ եկաւ Աստուծոյ դատաստանը՝ որ եղեկ. ԺԼ. 4-ին մէջ յայտնւած է. «Այն անձը որ մեղք կը գործէ պիտի մեռնի»։ Այս խնդիրը ինծի հետեւեալը կը յիշեցնէ. Անգլիոյ օրէնքը կը պահանջէ որ վարիչները միշտ փողոցին ձախէն վարեն ինքնաշարժը, մինչ Ամերիկայինը՝ աջէն։ Ենթադրենք թէ՛ Նիւ Եորքի մէջ ինքնաշարժով դացած ատեն ձախը պահեմ, և երբ ձեռքակալուելով դատաւորին ներկայացուիմ՝ ըսեմ. «Տէր, ասիկա տարօրինակ է, Անգլիական երկիրներու մէջ՝ մենք բոլորս ալ ձախէն վարելու ստուգուած ենք»։ — Դուք անգլիական օրէնքով չէք դատուիր, խնդիր չէ թէ ի՛նչ կը պահանջէ ուրիշ երկիրներու օրէնքը, դուք նկատի առնելու էք այն օրէնքը որով

պիտի դատուիք. պիտի պատասխանէ դատաւորը։

Ուրեմն Աստուծոյ չափանիշին համաձայն՝ ես կորսուած էի, և քանի որ յաւիտենականութեան մէջ միայն Աստուծոյ չափանիշով պիտի դատուէի, ուստի անյուսօրէն դատապարտուած էի։ Յետոյ ըսկալ տեսնել թէ՛ իմ խորհածս կամ բարեկամներու ինծի ըսածը՝ բնաւ արժէք մը չէր ներկայացներ՝ ինչու որ դատաստանը Աստուծոյ խօսքին համաձայն պիտի ըլլար, ո՛չ թէ բարեկամներու ըսածին։ Բացի ասկէ, քոյորս ալ մեղանշած էինք Անոր արդար դատողութեան համաձայն, և ուստի անօգուտ էր նայիլ ընկեր արարածներու օժանդակութեան, ինչու որ անոնք ալ ինծի նման միեւնոյն դատաւարաւորութեան տակ էին։

Բայց այս Գիտքը ինձ պատմեց մեկուն մասին, Յիսուս Բրիստոսի, որ Ինքզինք Աստուծոյ Որդի ըլլալ յայտարարեց։ Նա տեսաւ թէ՛ մարդիկ կորսուած էին և իրենց

կեանքն ալ մեղքի ծախած, ուստի ըսաւ
Հօրը. — Հայր, ես իմ կեանքս կորսնցու-
ցած չեմ, սուրբ եմ, առանց մեղքի, ան-
բիծ ու անարատ: Կեանքս իմն է, թոյլ
տուր որ այս մաքուր կեանքս տամ մեղա-
ւոր մարդոց կեանքին փոխարէն, որպէսզի
անոնք ազատ արձակուին: Աստուած ը-
սաւ. «Ինձ»: Յովն. Գ. 16-ին մէջ Քրիս-
տոս կ'ըսէ. Վասնզի Աստուած այնպէս սի-
րեց աշխարհը մինչեւ իր միածին Որդին
տուաւ, որպէսզի ամէն ով որ Անոր հաւա-
տայ չկորսուի, հապա յաւիտենական կեանք
ունենայ»: Եթէ Յիսուս Քրիստոս Աս-
տուծոյ Որդին է, արդարեւ մենք ունինք
փրկութեան վստահութիւն: Բայց մեզ կը
գիմադրաւէ սա դժուարութիւնը՝ իրաւ
Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդին է: Նոս
այս երեքէն միայն մէկը կրնայ ըլլալ. —
կամ Աստուծոյ Որդին, կամ խաբեբայ մը,
և կամ պատրանքի ենթարկուած պատա-
ւոր անձ մը: Եթէ յիշենք Անոր ճակա-
տիլը ժամանակին ամենախելացի մարդոց

հետ, որոնք յատկապէս կը զրկուէին խօս-
քով զինք բռնելու, թէ ինչպէս զանոնք
կը պապանձեցնէր՝ որ այլեւս չէին հա-
մարձակիր իրեն հարցում մ'ընել (Մատթ.
ԽԲ. 46), և երբ մենք ալ իմացական հայե-
ցակէտով մը նկատենք Անոր իմաստալից
ասացուածները՝ այս ենթադրութիւննե-
րուն վերջինը բացարձակապէս մէկդի պի-
տի ընենք: Երկրորդ կէտը նկատենք,
կրնա՞նք ըսել թէ՛ Անոր իմաստութիւնը
այնքան շատ էր որ՝ ուրիշները խաբելու
համար գործածեց: Երբեք լսա՞ծ էք
երիտասարդի մը մասին, որ փողոցներու
անկիւնները եղող խաբեբաներու և սրիկա-
ներու ընկերանայ՝ ու այս ընկերակցու-
թեան մէջ աւելի ազնուանայ, մաքրուի
և պատաւոր մէկը հանդիսանայ: Ո՛չ,
բնականաբար կ'ընդունիք թէ՛ այդպիսի
բան մը երբեք լսուած չէ: Բայց ես գի-
տեմ երիտասարդ մը որ Քրիստոսը կեան-
քին մէջ ընդունելով՝ ամենաստորին կեր-
բերէն բարձրացաւ մարդկութեան ազնիւ-

ւագոյն դասին, և ընաւ չեմ կրնար հաւատալ թէ՛ կեանքի մէջ խաղերայի մը ընդունուելովը, այդ կեանքը կրնայ լաւագոյն վիճակի փոխուիլ:

Անցեալ օր մէկը լսեցի որ սապէս կ'արտայայտուէր. «Բաց ճակատով և անվախ քայլերով փողոցին մէջ պարտիս՝ Գրիստոսի կը պարտիմ: Դարձեալ Անոր կը պարտիմ մաքուր կնոջ մը դէմքին նայիլս և պատւաւոր մէկու մը ձեռքը սեղմելս»:

Համայն ֆաշիստկիոր աշխարհի կարծիքը կը բերեմ քեզ վկայելու թէ՛ Յիսուս գէթ բարի մարդ մ'էր: Եթէ այդպէս է՝ ուրեմն պատւաւոր մէկը, և եթէ պատւաւոր մէկը՝ ուրեմն ըլլալու էր ինչ որ Նա վերագրեց Իրեն, Աստուծոյ Որդի՝ որ աշխարհ եկաւ Իր անմեղ կեանքը տալու փոխան ձեր և իմ մեղսալից կեանքին:

Հոս կ'ուզեմ աւելցնել երեք ծանօթ մարդոց վկայութիւնը՝ որ առնուած է Սիման Գոլէթի «Ճշմարտութեան Գիրքը»

հատորէն:

Ինան (1823) որ իր ուսմամբ և զբաղան կարողութեամբ՝ ճանչցուեցաւ որպէս առաջնակարգ դէմք մը Եւրոպայի օրուան զբաղէաներուն մէջ, թէև ծանօթ անհաւատ մը, բայց Ս. Գրոց մեծ ուսանող մ'էր: Նա Գրիստոսի մասին այսպէս կը գրէ. «Ո՛վ, բացարձակ յաղթողը մահուան, Գոլ Գործդ կատարելագործուած է, Աստուածութիւնդ հաստատուած, Քու և Աստուծոյ միջեւ այլեւս մարդիկ պիտի չկրնան տարբերութիւն դնել»:

Այո՛, նոյնիսկ Նափոլիոն Պոնափարթ, որուն հազիւ հազ կրնանք նայիլ որպէս աստուածաբան, շատ ժամանակ սպառած ըլլալու է Ս. Գիրք սերտելու, մանաւանդ կեանքին վերջին տարիները: Կը պատմուի թէ՛ մինչ արգիլափակուած էր Ս. Հեղինէ կղզիին մէջ, Նա առթիւ մը Կոմս Մօնթհօլօնի հարցուց. «Կրնա՞ք ինձ ըսել թէ՛ ո՞վ էր Յիսուս Գրիստոս»: Երբ պատասխանը յապաղեցաւ, Նափոլիոն յարեց.

«Լա՛ւ, ուստի ես պիտի ըսեմ քեզ՝ Աղէք-սանդըր, Կեսար, Շարլման և ես, մեր մեծ կայսրութիւնները հիմնեցինք բիրտ ուժի վրայ: Յիսուս միայն սիրոյ վրայ հաստա-տեց Իր կայսրութիւնը . . և քեզի ըսե՛մ ա-սոնց ամէնը մարդեր են և ո՛չ մէկը Անոր նման է: Յիսուս Քրիստոս մարդէն աւելի գերազանց է . . . Նա մարդուն սիրտը կը փնտռէ ու կը պահանջէ զայն առանց ունէ պայմանի, և Իր խնդիրքը անմիջապէս կը շնորհուի: Ի՞նչ սքանչելիք: Բոլոր ա-նոնք որ անկեղծօրէն կը հաւատան Անոր, փորձառաքար կ'ունենան գերմարդկային սէր մը Անոր հանդէպ և ժամանակը՝ այդ մեծ քանդիչը, անկարող կը մնայ մարել այն սուրբ բոցը . . . Այս է պատճառը որ ինձ համոզիչ կերպով կը փաստէ Յիսուս Քրիստոսի Աստուածութիւնը»:

Վերջին վկայութիւն մ'ալ, Բրոֆ. Սիմփսըն (Վրդ. Բժ. և Գիտ.) որ 1891 ին նախագայ ընտրուեցաւ «Քժիշկներու Արքայական Համալսարանին», Ս. Գրոց

նուիրուած ուսանող մ^թէր: 1905 Յիւ. 28 ին արտասանած իր հրաժեշտի ճառին մէջ նա կ'ըսէ. «Ձեմ գիտեր թէ՛ յոռետեսի ինչ տարագով այսօր ձեր առջեւ պիտի կրնայի կենալ, եթէ երբեք դեռ իմ պատանեկու-թեան աւիւնս չխաթարած, բարեկամ ընտրած չըլլայի անմեղ Որդին Մաբդոյ: Նա է միակ ուկը այն գետին՝ որ կեանք կու-տայ յառաջացող քաղաքակրթութեան, և որ կը յայտնուի ըլլալ՝ Առաջին և Վերջինը: Նա է Կենդանի եղողը՝ որ մեռաւ ու ահա յաւիտեան կենդանի է, և ունի Մահուան ու Անտեսանելիին բանալիները: Այս՝ փորձառութիւնս կ'ստիպէ զիս որ ընդու-նիմ զԱյն, Իր անձին բրած բոլոր վերդ-րումներովը:

Սակայն երբեմն կը հարցուի. «Ձէ՞ որ ուսեալ մարդիկ ընդհանրապէս անԱստ-ուածներ ու անհաւատներ են: Ասոր իբր պատասխան՝ մէջբերում մ'ընեմ Փիլս. Տր. Սամուէլ Քինսէն. «Թէև կան կարգ մը մեծ տաղանդ և բարձր ուսում ունեցող մար-

գլխի որոնք կ'անգիտանան Սուրբ Գրքին վաւերականութիւնը, բայց բոլոր փիլիսոփաները նոյն դասակարգէն չեն: Եւս կը հաւատամ թէ՛ անհաւատ բնագէտներ ոչ միայն քիչնոր են՝ այլ գիտական գանազան ճիւղերու մէջ ամենաբարձր դիրք գրաւած մարդիկ՝ եղած են և են՝ անկեղծ հաւատացեալներ»:

Աստղաբաշխական և մաթիմատիքական գիտութեանց մէջ՝ ո՞վ կրնայ գերադանցել Նեւտոնը: Որքան ատեն որ աշխարհ կը մնայ, անոր մտային կարողութիւնները պիտի ճանչցուին և պիտի դիտահատուին: Բայց հազիւ հազ կրնայ գտնուիլ անոր նման անկեղծ և ճշմարիտ Գրիստոնեայ մը: Ուրախալի է նաեւ տեսնել դարուս աստղաբաշխ գրողներուն շատերը՝ որոնց գործերէն կը հասկնանք թէ երկիւղած հաւատացեալներ են:

Երկրաբանութիւնը որ բոլոր միւս գիտութիւններէն աւելի ներհուկ նկատուած է Աստուծոյ Խօսքին, անոր երեւելի ուսա-

նողներուն ու վարդապետներուն մէջ կը գտնենք Տին Պըքլէնտ, Հիւ Միւլլըր, Տր. Փայ Սմիթ, Սըր Րօսէրիք Մըչլսըն, Սըր Ճան Ու. Տօւրն և զեռ տասնց նման ուրիշ շատեր որոնք անկեղծ հաւատացեալներ են:

Տարրաբանութեան և ելեքտրադիտութեան մէջ ո՞վ կրնայ գերադանցել Ֆարաադէյը: Արժանիօրէն նա յաճախ կոչուած է սոյն գիտութեանց հայրը. բայց նոյնատեն եղած է Աստուծոյ ու աղօթքի մարդը: Սըր Հէմֆրի Տէյլի՝ որ գիտական շատ մը սիզբունքներ գործնականի վերածելով մեծապէս նպաստած է մարդկութեան, իր ետեւ թողած է ինչ ինչ ընտրեալ ճառեր ու գրութիւններ որոնք կը հաստատեն անոր հաւատքի աէր մէկը ըլլալը:

Մերենագիտութեան մէջ կրնանք յիշել Ճօրճ Սթիֆէնսընը, քա՛ջ և ազնուաբարոյ երիտասարդը, որ տոկուն ու յարատեւող հանքաբան և մեծամիտքաւ ճար-

տարագէտ մ'ըլլալով ջերմեռանդ ու առատաձեռն հաւատացեալ մ'ալ էր: Երբ նա Թեփթին հաստատուեցաւ, իր դործաւորներուն համար շինել տուաւ եկեղեցի մը, որ բոլորն ալ երկրպագութեան առիթ ունենան:

Այս ցանկը պիտի փակեմ յիշելով Տր. Սամուէլ ճանսընը, որուն խորիմաց դասական ուսումը, հանրածանօթ իր «Ֆիլիո» մեծածաւալ բառարանին միջոցաւ, կը միանար ընդարձակ գիտական պաշարի մը՝ բայց շատ բարեբաշտ մէկն էր, որու նմանը չեմ կարծեր թէ պատմութիւնը արձանագրած ըլլայ: Նա Ս. Գիրքը կեանքին առաջնորդը ընտրեց, և իր մահուան ժամուն բոլորովին անոր խոստումներուն յենեցաւ մխիթարութեան համար:

Տակաւին նկատելիք հետաքրքրական կէտ մ'ունեմ: 1865 ին գումարուած Բրիտանական Միութեան ատեն՝ ծանուցադիր մը պատրաստուեցաւ որ 617 գիտական մարդիկ, որոնց շատերը բարձր

գիրքի վրայ կը գտնուէին, զայն ստորագրելով յայտարարեցին իրենց հաւատքը՝ ոչ միայն Ս. Գիրքին ճշմարտութեան և վաւերականութեան, այլ բնական գիտութիւններու հետ ունեցած ներդաշնակութեան մասին ալ: Յիշեալ յայտարարէն մէջ մէկ օրինակ տպուեցաւ ստորագրողներուն համար, իսկ ընտղիրը դետեղուեցաւ Ռգսֆօրտ համալսարանին Պատիւին գրադարանին մէջ: Շատ գիւրաւ կրնան աւելցուիլ ուրիշ անուններ եւս, և շատ ալ երկար կրնայ գրուիլ այս հետաքրքրական նիւթին շուրջ. «Բայց ասոնք գրուեցան, որպէսզի հաւատաք թէ Յիսուս Քրիստոսն է, Աստուծոյ Որդին, և որպէսզի հաւատալով կեանք ունենաք Անոր անունովը» (Յովհ. Ի. 31):

Համոզուած ըլլալով թէ Սուր Գիրքը ճշմարիտ է, թէ Քրիստոս Աստուծոյ Որդին է, թէ նա յօժարութեամբ աշխարհ եկաւ, թէ Աստուած զիս այնպէս սիրեց որ իր նրդին սիրով զրկեց մեղքերուս բոլոր

պատիժը վրան առնելու որ ես սղատ ար-
ձակուիմ, արդ եթէ արժանապատուութիւ-
նըս պահելու եմ որպէս գիտակից անձ մը՝
պէտք է ընդունիմ Տէր Յիսուսը իբրեւ
Փրկիչս: Դարձեալ, եթէ ունիմ ազնու-
թեան ոեւէ տեսելական կամ սէր, պիտի
չհամարձակիմ մերժել այն Ներք զոր Քրիս-
տոսը առաջնորդեց ինծի համար մեռնելու
Գողգոթայի խաչին վրայ: Ո՛չ, տարբեր
ընարութիւն չունիմ, ամբողջ էութեամբ
կ'ընդունիմ այսպիսի Փրկիչ մը՝ զուր ալ
չէ՞ք ընդունիր:

Բայց դեռ պիտի չընդունեմ որ ընդու-
նիք զՍյն որպէս ձեր փրկիչը: Ս. Գիրքը
ճշմարիտ է, ատոր համոզուած էք չէ՞,
բայց կրցա՞յ զայն ուղիղ մեկնել: Սակայն
մեր բարեկամներուն գաղափարները նկա-
տողութեան արժանի չէ՞ն: Ինչու՞ խոհեմ
չգտնուիմ թոյլ տալու որ անոնց տեսա-
կէան ալ պարզուի: Այո՛, սիրով պիտի ը-
նեմ:

Եզրակացութիւնն բարեկամի մը սրտ-

մեղէ յետոյ՝ նա սրտախնայեց. «Ի՞նչ էք
էք, նմանապէս ես՝ թէեւ իմ տեսութիւնս
ձերինէն տարբեր է: Ինծի այնպէս կը
թուի թէ՛ շատ տարբերութիւն չ'ընեն մէ-
կուն հաւատալիքը, եթէ նա անկեղծ է իր
հաւատքին մէջ՝ անոր վերջը լաւ կ'ըլլայ»:
Քննենք այս կարծիքը: Իիցուք թէ՛ ով-
կիանոսի մէջ նաւարկող նաւապետ մը բո-
լորովին վստայ թէ նաւը ապահով ընթացքի
մէջ է, կը քաշուի խուցը հանգչելու, սա-
կայն նաւուն տալիք ուղղութեան ծրար-
քին մէջ սխալ մ'ըրած է անդիտակցաբար:
Անոր այդ լման վստահութիւնը կամ ան-
կեղծ հաւատքը՝ կրնա՞ն փրկել նաւը ապա-
ռաժուտ եզրէն կամ ճամբորդները ալեաց
գերեզմանէ՞ն: Հարկւրաւոր կոտորած սըր-
տեր և հազարաւոր ողբացող ազգականներ
կը հերքեն այսպիսի յերհիւրուածի մը բս-
տուգուգութիւնը թէ՛ ոեւէ հաւատքի մէջ
անկեղծութիւն մարդը վերջապէս ուղիղ
վախճանի կ'առաջնորդէ: Բնականաբար
ե՛ս ալ անկեղծութիւն կը փնտռեմ, բայց

ան ուղիղ ճամբու մէջ ըլլալու է, եթէ ոչ կորուստի կը տանի մեզ:

Ժամանակէն Յաւիտենականութիւն երկարող կեանքի ճամբորդութեան քարտէսը, կասկածի տեղ չի թողուր: Յովհ. Ժ. Գ. 6-ին մէջ Գրիստոս կ'ըսէ. «Նա եւ ճամբան ու ճշմարտութիւնը և կեանքը, մէկը Հօրք քոյ չգար, եթէ ոչ Ինծանայ»: Գործք. Գ. 12-ը կ'ըսէ. «Նա ուրիշ մէկով փրկութիւն չկայ, վասնչի անկէ զատ ուրիշ անունն չի, չկայ, երկինքի տակ մարդոց մէջ տրուած, որով կարող ընտանիք փրկուի»: Եթէ կրնաք երկինք երթալ տարբեր ճամբով, դուք յաւիտեան կենդանի վկայ մը պիտի կանգնիք Աստուծոյ Որդւոյն տգիտութեան դէմ, կամ այն ենթադրութեան՝ թէ Նա մարդիկ խաբելու համար ըսաւ թէ՝ ուրիշ ճամբայ չկայ: Ամենայն անկեղծութեամբ կը հարցնեմ. — կ'ուզէ՞ք անձերնիդ այսպիսի վտանգի մը ենթարկել:

— Նոր էջնք դարձուր, և ապրէ բացարձակապէս սուրբ կեանք մը՝ ու յաւի-

տենականութեան յարմար պիտի ըլլաս. կ'ըսէ Պր. Բարեկարգիչը: Ասիկա որամարանական կը թուի չէ՞, բայց զայն բնականելէ առաջ փորձի մը ենթարկենք: Եթէ մէկը կրնայ բացարձակապէս սուրբ ըլլալ, այդ վիճակին աւելի բարձրին կըրնայ հասնիլ: Ո՛չ, անշուշտ պիտի չկրնայ: Եթէ մէկը կատարեալ է՝ հասած է այն աստիճանին որուն հասնելու էր: Ուրեմն տրամաբանական լուրջ դատողութեան համաձայն՝ Նա պիտի չկրնայ ետ առնել անցեալի սխալները:

Օրինակի համար, առեւտրական ընդարձակ գործի վերատեսուչ մը՝ կ'երթայ իր գլխաւոր հաշուակալին և կը տեսնէ որ վաճառատունը 10,000 ոսկի կը պարտի գործարանատէրերու և ուրիշ վաճառականներու: Նա հաշուակալին կ'ըսէ. «Բոլոր պարտատէրերուն նամակներ գրէ և ըսէ թէ մենք անցեալի հաշիւներով պիտի չմտահոգուինք, որովհետեւ առեւտրական տնտեսութիւն մէջ նոր էջ մը բացած ենք: Բայց

կը խոստանանք ոսկին իր համարժէքով փոխանակել մեր ապագայ առեւտուրին մէջ, և ասկէ յետոյ պիտի ապրինք հրապարակի վրայ եղած բարձրագոյն չափանշին համաձայն»։ Հաշուակալը բնականաբար պիտի խորհի թն՝ իր գործատէրը ցնորած է, և պիտի մերժէ այսպիսի առաջարկ մը ներկայացնել իրենց պահանջատէրերուն։ Սակայն հազարաւոր ողջախոհ մարդիկ՝ կը ջանան երկինք երթալ ճիշտ համանման առաջարկով մը։ Ասոնք ապագայ պարտականութիւններն ին կը յարդարեն Աստուծոյ առջեւ, բայց անցեալի մասին բնա՛ւ հող չեն ըներ։ Բայց ժողով. Գ. 15 ին մէջ կը կարդանք. «Աստուած անցածը կը փնտռէ»։ Ո՛հ, Աստուծոյ արդարութիւնը կը պահանջէ որ անցեալի ո՛չ մէկ հաշիւ փակուի, մինչեւ որ «ամենավերջին նաքարակիտը վճարուի», և արդարութեան մէն մի վճիռ դահացում գտնէ։ Ոճրագործը կրնայ ծածկել իր արարքը և անկէ յետոյ 10 տարին եր

ապրիլ օրինակելի քաղաքացիի կեանք մը, բայց երբ խնդիրը երեւան ելլէ, մարդկային օրէնքը զայն մահուան կը դատապարտէ, թէ և 10 երկար տարին երէ իվեր՝ նա մէկը սպաննած չէր։ Անցեալի մեղքը ծածկել—ըլլայ դո՛րծով խորհուրդով կամ խօսքով գործուած—ապրուած բացարձակապէս կատարեալ կեանքով մը՝ տակուին զիս մեղաւոր կը թողու Անոր ներկայութեան առջեւ՝ Որու համար անցեալն ու ապառնին ներկայի նման բաց են։ Աստուծոյ սրբութեան չափանիշին համաձայն մենք բոլորս ալ մեղանշած ենք։ Ուրեմն դուրս բերենք այդ մեղքը և թոյլ տանք որ արդարութիւնը զայն դատէ։

Անցեալը դիմապրաւել՝ ինծի համար յաւիտենական կորուստ կը նշանակէ։ Բայց Տէր Յիսուս իր կեանքը իմ տեղս տուաւ որ ես ազատ ազատ լուրջ։ Իմ անցեալի մեղքս քաւուած է, և Աստուած, որուն դէմ մեղանշած եմ, ինծի տուած է իր ընկալագիրը՝ որով Քրիստոսը մեռելն է

ըէն յարութիւն առնել տալով՝ ցուցուց իր հաճութիւնը թէ՛ խաչին վրայ կատարուած գործը լման եղած է։ Երբեմն խաչեալ Քրիստոսը՝ այժմ իմ կենդանի Փրկիչս է։ Այո՛, գիտցէ՛ք թէ Քրիստոս հիմա կենդանի Փրկիչ մըն է։

— Սակայն ի՞նչ հարկ կ'ար Քրիստոսի մեռնելուն, առանց մեռնելու մեզ չէ՞ր կրնար փրկել։ Ես և դուք Աստուծոյ օրէնքը կոտորած ենք, և ասոր պատիժը մահ է։ Ուրեմն Քրիստոս ի՞նչպէս պիտի կրնար մեզ արգարացիօրէն փրկել առանց այդ պատիժին լիօրէն ենթարկուելու։ Կը տեսնէ՞ք, եթէ Նա սուգանքը լման չհատուցանէր, տակաւին վճարելիք բան մը պիտի մնար մեզի։ Բայց սա սրող է թէ՛ քանի որ Նա մեռաւ, այլեւս մեր կոտորած օրէնքը չի կրնար մեզ դատապարտել։

Անդամ մը՝ վճարել ատենանի մը դատը՝ յաջորդ օրուան ձգուեցաւ, և ինչպէս սովորաբար կ'ըլլայ, որպէսզի դուքսի տեւէ ազդեցութեան չ'ենթարկուին ամ-

բաստանեալները՝ գիշերուան միջոցին պահակառուն արգիլափակուեցան։ Յաջորդօր երբ դատաւորը ատենանը մտաւ՝ քննիչ յանձնախումբին խօսքը ուղղելով ըսաւ. «Պարոնայք, դատը բեկանած է. բանտարկեալը աւելի բարձր ատենանի կանչուած է»։ Յանցաւորը գիշերը մեռած էր իր խուցին մէջ և ալ հարկ չի կար խնդրոյն վերաքննութեան, որովհետեւ օրէնքը չէր կրնար դատել մեռած մէկը։ Դաբձեալ, եթէ մարդ մը ուրիշ մը մեռցնէ՛ մահուան կը դատապարտուի, իսկ եթէ ճ հոգի մեռցնէ՛ կրկին մահուան կը դատապարտուի, որովհետեւ այս է օրէնքին ամենամեծ պատիժը։ Խնդիր չէ թէ մարդուն մեղքը ո՛րքան մեծ է, օրէնքը յանցաւորին կեանքը առնելէն աւելի մեծ պատիժ չի ճանչնար։ Կամ խնդրոյն սապէս նայինք, եթէ մէկը ոճիրի մը համար կախուելէ ամիս մը վերջը՝ ստուգուի որ Նա մէկի տեղ երկու անձ սպաննած է, անոր մարմինը դերեզմանէն հանելով նորէն կը դատե՞ն։ Անշուշտ ո՛չ,

ինչու որ արդէն օրէնքին ամենամեծ պատիւը կրած է, ուստի օրէնքը անոր աւելի բան մը չի կրնար ընել: Տարբերութիւն չ'ըներ, եթէ երկար ատենէ իվեր մոռցած ըլլամ անցեալի մեղքերէս ոմանք, անոնց ոեւէ մէկէն չեմ վախնար, որովհետեւ այն վստահութիւնը ունիմ թէ՛ Տէր Յիսուս որպէս իմ փոխանորդս օրէնքին ամենամանր պատիւը կրեց, որ անոր բոլոր վնասներէն լիովին ազատուիմ:

— Սակայն, կ'ըսէ Պր. Յուսալիցը, եթէ Քրիստոս ամենուն համար մեռաւ, ուրեւն բոլորս ալ փրկուած ըլլալու ենք: Բայց Աստուած այդպէս չ'ըսեր: Նա կ'ըսէ թէ՛ բոլորին փրկութիւն կայ, բայց ո'չ թէ ամենը փրկուած են: Զորօրինակ, սատիկ ձմեռուան միջոցին՝ երբ Լոնտոնաբնակ շատ աղքատներ սովամահ կ'ըլլան՝ ըսենք թէ՛ քանի մը հարուստներ ձրի կերակուր հայթայթեցին չքաւորներու համար, տեղւոյն մէկքանի մեծ սրահներուն մէջ: Այս միջոցին փողոցի մէջ աղքատի

մը կը հանդիպինք որ կ'ըսէ թէ սովամահ կ'ըլլայ: Բնականաբար իրեն պիտի ըսէք թէ՛ արդեօք չի՞ հաւատար քաղաքին մէջ շրջած աղաւարաութեան՝ թէ բոլորին բաւելու չափ ձրի կերակուր կայ պատրաստ: — Այո՛, կը հաւատամ որ ատիկա ընդհանուր առմամբ շիտակ է, բայց ես դեռ անօթի եմ. կը պատասխանէ:

— Արդարեւ այդպէս է բարեկամ, հակառակ ձեզի համար եղած նախապատրաստութեան՝ դուն եղածիդ պէս անօթի պիտի մընաս, մինչեւ որ անձամբ չ'ամսնակցիս ձեր բոլորին համար պատրաստուած սեղանին. պիտի ըսէք: Ճիշտ նոյնպէս է հոգեւոր տեսակէտը, Քրիստոսի մահը փրկութիւն կրնայ շնորհել ամեն ո'վ որ կը փափաքի ունենալ, բայց միայն անոնք կը փրկուին՝ որոնք Քրիստոսի անձամբ կը ներկայանան և կ'ընդունին թէ՛ Նա մեռաւ իրենց տեղը ու իրենց համար: Ես պէտք է գնահատեմ Քրիստոսի մահը՝ և Զինք ընդունիմ իբրեւ իմ փրկիչս, եթէ ո'չ, Անոր մահը ինձի օ-

գուտ մը չ'ըներ, ճիշտ ա'յնպէս ինչպէս մարդ մը կրնայ ծարաւէն մեռնիլ աղբիւրի մը քով՝ եթէ մերժէ ընդունիլ անոր կենսատու ջուրը:

— Պր. Ռշիմը կ'ըսէ. Այդ բոլորը շիսակ է, բայց Յիսուս Քրիստոսի կեանքը՝ կրնայ փոխարժեք նկատուիլ շատերու կեանքին, որպէսզի Աստուած փրկութիւն պարգեւէ այն ամէնուն՝ որոնք ապաշխարելով Քրիստոսը կ'ընդունին: Ասիկա լաւ հարցում մը կը թուի, և թուաբանական խնդիրը մը նման կրնայ լուծուիլ թուղթի վրայ: Յիսուս Քրիստոս մարմին առած Աստուած էր, Աստուածութիւն մարդեղութեան մէջ, Անոր տուածը անհուն կեանք մ'էր՝ որ կրնայ բաւական սեպուիլ հոռնաւոր կենքերու ունէ թուին: Առէք թուղթի կտոր մը՝ և անոր վրայ գրեցէք ձեր կրցած երեւակայածին չափ խոշոր թիւեր, միլիոններ կամ աւելի, յետոյ բոլորը գումարեցէք: Հիմա մեծ գումար մ'ունեցաք, ապա բազմապատկեցէք դայն 10-ով, 100-ով

կամ միլիոնով, ինչպէս որ կուզէք, յետոյ թուանշաններով լեցուցէք շատ մը ուրիշ թուղթի էջեր. տակաւին հունաւոր թիւ-մ'ունիք ձեր մօտ, թիւ մը որուն շուրջ սահման կայ որքան ալ երկարի, ան ունի սկիզբ մը և վախճան մը: Ո՛չ, հունաւորները մէկտեղ բերելով մէկը չի կրնար բեւեւան բերել անհունը: Քրիստոսի անհուն կեանքը որ մեղաւորին համար տրուած է, պէտք եղածէն աւելի իսկ է փրկութիւն այն ամէնը որոնք կ'ընդունին զյոյն որ մեռաւ իրենց փոխարէն և իրենց համար:

— Բայց ի՞նչպէս Քրիստոս կրնայ չար-չարուիլ իմ մեղքերու հաւաք՝ որով գործուած են Անոր մահուանէն 1900 տարիներ վերջը: Առաջին առթիւ, այս խնդիր մը կը թուի խելացի մէկուն համար: Սակայն որքան աւելի խոհեմ գտնուինք այնքան շուտ պիտի տեսնեք անոր լուծումը: Աստուած Ամենագէտ է ու յաւիտենական: Եւրոպ. Գ. 14-ին մէջ Աստուած կ'ըսէ «Ե՛մ եմ» (ներկայ ժամանակ), և Յովհ. Բ. 58-ին

մէջ Քրիստոս կ'ըսէ. «Աբրահամի ըլլալէն առաջ եմ եմ» (ներկ. ժամանակ): Ուրիշ խօսքով, Ամենադէտ ու Յաւիտեանահան եղողին համար՝ ո՛չ անցեալ և ո՛չ ալ ապառնի գոյութիւն ունի, այլ յաւիտեանական ներկայութիւնն ւնի: Երկու հազար տարիներ վերջ երեւան դալիք դէպքերը՝ Անոր համար նոյնքան տարիներ առաջ տեղի ունեցածներու չափ պարզ և որոշ են: Աստուծոյ առջեւ անցեալն ու ապագան այսօրուայ նման յստակ են:

— Բայց Աստուած ինչո՞ւ իր կառլիկ յինազանդեղու անկարող շատեղծեց մարդը՝ որպէսզի մեղանչեղու աղ անկարող ըլլար: Ասիկա կը նմանի այն հարցին թէ՛ Աստուած ինչո՞ւ խոտոր ուղիղ գիծ մը չդժեց, կամ կ'որ քառակուսի մը, կամ սեփ-սեւ առարկայ մը նոյնատեն ճեփ-ճերմակ: Մարդը ընտրելու ազատ կարողութիւն ունեցող անասուն մըն է, ուստի հարցը պիտի ըլլար. Աստուած ինչո՞ւ չստեղծեց ընտրելու ազատ կարողութիւն ունեցող անա-

սուն մը՝ որ չունենայ ընտրելու ազատ կարողութիւն:

Եթէ քնածութեան (հիպնոթիզմ) դո-րութիւն ունենայի՝ ինծի կարելի պիտի ըլլար երկու տղաքս կէս քնային վիճակի մէջ դնելով խել անոնցմէ ընտրելու ազատ կարողութիւնը և յետոյ ըսել. «Նստեցէք այս աթոռին վրայ մինչեւ վերադառնամ», «Ելէք և ճաշեցէք», «Մի ուտէք», «Ինչեր բարիի համբոյր մ'առէք ինձմէ», որով անըզգայ բազումներ պիտի շրջապատէին վիզըս, և լուռ շրթներ պիտի սեղմուէին իմինիս վրայ: Այսպէսով իմ իւրաքանչիւր հրամանիս՝ պիտի ունենայի պատրաստ ու կատարեալ հնազանդութիւն իմ գաւակներէս, բայց ես ասոր մէջ սիրոյ յագեցում պիտի ունենայի. ամենեւին:

Իմ փափաքս է ունենալ ազատ կամքի տէր զաւակներ, որոնք իրենց ուրոյն կամքով պիտի ուզեն դործադրել խրատականներս՝ որ սիրոյս արտայայտութիւններն են իրենց բարիին համար, թէեւ անոնք ինծի

անհնազանդ ալ կրնան գտնուիլ: Ես ալ չեմ կրնար ըմբռնել թէ՛ Աստուած որ այս փափաքները կը դնէ ձեր և իմ սրտին մէջ, ինչպէս ինք պիտի գոհանայ այն կերպերով որ նոյնիսկ մենք չենք կրնար գոհանալ:

Աստուած խաժանդներ չ'ուզեր, որոնք կը ցատկեն թելին շարժած ունէ ու զուլթեամբ, ոչ ալ մարդկային կերպարանք առած ինքնաշարժեր՝ որոնք մեքանայօրէն և բացարձակապէս հնազանդին Անոր կամքին, ինչպէս մոլորակները՝ որ կը թաւալին անշրպետին մէջ: Աստուած ուրիշ բանով յագեցում չի գտներ՝ եթէ ոչ մեր սրտին ինքնաբոլոս սիրով, որ միշտ քալենք այն շաւիղին մէջ որ պիտի հաճեցնէ ու պատուէ զԱյն: Այս ալ բացորոշ է թէ՛ նոյն ազատ կամքին դօրութիւնը՝ եթէ ուզենք մեզ կը կարողացնէ դրդուելու և անպատուելու մեր Արարիչը:

— Սակայն Աստուած ի՞նչ կարելու տալիս պիտի տայ այս մեր փոքրիկ աշխարհին, բարոյաբանք այն ահարկու եւ ընդարձակ

սիւեցերբին: Խորեցէք մեր արեգակնային դրութեան վրայ. Նեւտոնն եռեսուն անգամ աւելի հեռու է Արեւէն քան Երկիրը, որով անոր մէկ տարին կը հաւասարի մեր 164 տարուան: Դեռ անդին կան շատ արեգակներ ու մոլորակներ որ իրարու շուրջ կը թաւալին՝ ինչպէս մեր արեգակնային դրութիւնը արեւուն: Ուրեմն ի՞նչ կարելութիւն պիտի ունենայ մեր Երկիրը Աստուծոյ համար և ո՞րքան քիչ արժէք մարդը, կ'ըսէ աստղաբաշխը՝ որուն պատանեկան հաւատքը թուաւ երբ նա հեռագէտը իր ձեռքը առաւ: Երկնային անսահմանութիւնը խլած է անոր հաւատքը իր մօր Աստուծոմէն: Բայց Աստուած ի՞նչպէս կրնայ զբաղիլ մարդուն հետ՝ որ անհունութեան բազմապատկառ շատ աւելի փոքր է քան աւազին հատիկը:

Գիտութեան այս ծարաւը՝ զայն հանդիստ պիտի չթողու: Երկնային մարմիններուն քննութիւնը՝ գիշերուան համար շահեկան է, սակայն ցորեկուան պարապ

ժամերը ի՛նչպէս պէտք է անցնին: Ինչու՞ չառնել մանրացոյց մը և ուղղել գէպի ցածը, իր ոտքերուն տակ տարածուած գետինը, և ահա ուրիշ աշխարհներ կը բացուին անոր աչքերուն առջեւ: Աշխարհներ, որ վերի եղածներուն պէս հրաշալիքներով լեցուն են, և տակաւ առ տակաւ անոր հաւատքը իրեն պիտի վերագառնայ: Այո՛, այն Աստուածը որ կրնայ հետեւիլ այսպիսի մանրամասնութեանց, մինչ իսկ փոսերը գոյացած կաթիլ մը ջուրի մէջ վխտացող է՛ն փոքր կեանքերով՝ ամենայն վրատահութեամբ պիտի հետաքրքրուի մարդով եւս՝ որ գլուխ գործոցն է կենդանական ստեղծագործութեան: Այս նոր խուզարկումը՝ ետ պիտի բերէ գայն հակալըշուէն գէպի հաւասարակշռութիւն, իսկ հաւասարակշռութիւնը՝ գէպի գլխատուած: Դուք հաւասարակշռին մէջ էք, թէ ոչ թէ՛ թեւօրէն շեղած էք: Կրնա՞ք տեսնել ներկան ապագայի հետ ունեցած իր ճշմարիտ կապակցութիւններով:

Բենեամին փրանքլին կ'ըսէ «Մենք բոլորս ալ սխալական ենք»: Երբ նա կարեւոր որոշում մ'ունենար ընելու՝ թուղթի կտոր մ'առնելով երկու յաջորդական սիւնակներու կը բաժնէր և անոնց վերեւ կը գրէր. «ի նպաստ» և «ի վնաս», յետոյ խնդիրը զգուշութեամբ կը քննէր: Երբ խնդրոյն նպաստաւոր պատճառ մը գտնէր՝ կը գնէր «ի նպաստ»ին տակ, երբ անոր հակառակ փաստ մը գտնէր՝ «ի վնասին» տակ կը գրէր: Իր կարելին ընելով երբ այս ցանկը լեցնէր՝ կրկին գայն վերաքննելով կ'ըսէր, «Այս 'ի նպաստի' փաստը՝ 'ի վնաս' ի փաստէն երկու անգամ աւելի զօրաւոր է, և այս մէկ 'ի վնաս'ը 'ի նպաստ'ի երեք փաստերուն արժէքը ունի»: Այսպէս յաջորդաբար կը շարունակէր՝ մինչեւ պէս յաջորդաբար կը շարունակէր՝ պէս հաւաստ. որ ցուցակը պէտք եղածին պէս հաւաստ. րակըշուէն, յետոյ աւելցած վերջին փաստերուն համաձայն իր որոշումը կուտար, կամ ի նպաստ խնդրոյն կամ ի հեճուկս:

Առանց նախապաշարման դուք ալ կ'ուզէ՞ք վերոյիշեալ կերպով նկատի առնել ձեր ապագայ կեանքի հարցը: Մի մոռնաք որ վտանգը միշտ անհաւատութեան կողմն է: Դուք վստահելով և հաւատալով բան մը չէ՞ք կորսնցնել, բայց տարակուսանքով ամէն բան կրնաք կորսնցնել:

— Սակայն հաւաստիք տրանք անսկսելու է: Այո՛, սխալ է խորհիլ թէ՛ հաւատքը ներհակ է տրամաբանութեան: Հաւատքը և բանականութիւնը՝ ձեռք ձեռքի կը քալեն, անոնց մէջ միայն սա տարբերութիւնը կայ, երբ վերջինը ալ անկարող է յառաջանալու՝ առաջինը կը շարունակէ: Տրամաբանութիւնն ալ չափով մը հաւատքէն կախեալ է, որովհետեւ առանց գիտութեան անհնար է տրամաբանել, և գիտութիւնն ալ, մարդկային վկայութեան համաձայն՝ մեծ մասամբ հաւատքի խնդիր մըն է: Օրինակի համար, ես կը հաւատամ թէ՛ մեծ չափով տրուած բնամորմը (սղբիքնին),

կրնայ թունաւորել մարդկային էակ մը: Առանց ակնհաստես ըլլալու կատարուած գործողութեան՝ մարդոց այս մասին տրուած վկայութեան կը հաւատամ՝ և եթէ միլիոններով ոսկի ալ տրուի ինծի, գայն չեմ գործածեր:

Եթէ ուշադրութեամբ քննենք, պիտի տեսնենք թէ՛ մեր ունեցած գիտութեան գրեթէ ինը-տասերորդը, մարդոց դրելուն կամ խօսելուն հաւատալու արդիւնք է, որովհետեւ մենք բոլորը անձամբ անուշած չենք: Քանի որ ուրիշ մարդերու վկայութիւնը այնքան ազատօրէն կ'ընդունինք՝ հազարաւոր Քրիստոնեաներու վկայութիւնները մերժե՞նք՝ երբ անոնք կ'ըսեն թէ՛ Աստուծոյ Խօսքին գրութիւնները իրենք անձամբ փորձած և անոնց ճշմարիտ ըլլալը ապացուցած են:

— Բայց Աստուած ինչո՞ւ մեղիս մահուան դատարարեցաւ: Ատոր չեմ կրնար պատասխանել, միայն այսչափ կրնամ ըսել թէ՛ Անոր անհուն սրբութեան առջեւ, ո՛չ

մէկ մեղք կրնայ կենալ: Կեդրոնական Ափրիկէի մէջ ցեղապետ մը՝ առանց կորսնցնելու ժողովուրդին իրեն հանդէպ տածած սէրն ու յարգանքը, բարկութեան թէթեւ նոպայի մը մէջ՝ կրնայ կինը դանակով մեռցնել: Մինչդեռ զարգացած երկիրներու մէջ նոյն արարքը՝ մարդասպանին կեանքով կը փոխարինուի: Ոճիրը երկու երկրին մէջ ալ միեւնոյնն է, բայց մէկին մէջ ոչմէկ դատ, իսկ միւսին՝ անմիջական փոխարինում, և ասոր տարբերութիւնը՝ պարզապէս քաղաքակրթութեան արդիւնքն է: Այն մեղքը որ Կեդրոնական Ափրիկէ ոչինչ կը համարուի, մեր երկրին մէջ մարդու մը կեանքը կը կորսնցնէ: Եթէ կրնաք՝ ճիշտ նոյն համեմատութեան դէք մեղք մը որ մեզի համար ոչինչ կ'երեւի, բայց որքան մեծ՝ անհուսօրէն սուրբ եղող Աստուծոյ մը: «Աստուած լոյս է և Անոր մէջ բնաւ խաւար չկայ» (Ա. Յովհ. Ա. 5):

Այդ սոյց կրնայ ըլլալ, բայց Աստուծոյ

գրութեան կը վայելէ՝ մեզ բոլորս երկինք յառնել: Լոյսիսկ երբ Քրիստոսն ալ մեր ժեմքն ուրիշ մեր մեղքերը կրողը: Այս՝, նա արդար ու գթոտ Աստուած մըն է, սակայն լսէք ինձ, բարիք մը եղած պիտի ըլլա՞յ ալքատի մը՝ երբ մուրացիկի ցնցոտիներով փոխադրուի շողշողուն և պծնուած սրահ մը: Հոն աւելի պիտի չ'ամփնա՞յ իր ցընցոտիներուն համար, և լաւագոյնը ընէ խոյս տալու դէպի այն մութ փողոցը՝ ուր կէ բերուեցաւ: Հոս նա անհունա երջանիկ կ'զգայ: Նմանապէս, Աստուծոյ կողմանէ չնորհք մը եղած պիտի ըլլա՞յ մեղաւորին, երբ զայն իր մեղքերով բերէ երկնային սուրբ լոյսին, որը մերժած է Աստուծոյ մատուցած միակ մաքրող զօրութիւնը: Եթէ դուք և ես երջանիկ պիտի չզգայինք երբ մեր բարեկամները կրնային յստակօրէն տեսնել մեր մաքին խորերը ու կարգային մեր խորհուրդները որոնք հոն ծնունդ առած են (թերեւս այդ մեր բարեկամներուն բարոյական չափանիշը մերի-

նին հաւատար իսկ չէ), ուրեմն ի՞նչ պիտի
զգանք երբ կենանք Աստուծոյ առջեւ, Ո-
րու բացարձակ սրբութիւնը կը մերկացնէ
մեզը իր բոլոր գարշութիւններով:

Յայտ. Զ. 16 ին մէջ Աստուած մեզի
կը յայտնէ անոնց վիճակը՝ որոնք այժմ կը
մերժեն Յիսուս Քրիստոսը՝ որպէս իրենց
փրկիչը և գէտի յաւիտենականութիւն կ'ըն-
թանան իրենց մեղքերուն մէջ: Անոնք պիտի
կանչեն լեռներուն և ժայռերուն որ իրենց
վրայ իյնան ու ծածկեն զիրենք Երկնային
Դահլը նստողին երեսէն: Իսկ նոյն Քրիս-
տոսին ներկայութիւնը Զինք սիրողնե-
րուն երանաւէտ երկինք մը պիտի ըլլայ:

Աստուծոյ մեզ քոյրս աղ երկինք առ-
նելու գաղափարին անհեթեթութիւնը կը
սեանէ՞ք: Երկինքը ո՛չ միայն վիճակ մը
այլ տեղ մ'ալ է: Հոն, Տէր Յիսուսի
ներկայութիւնը երկինք պիտի ըլլայ ի-
րենց մեղքերէն մաքրուողներուն համար,
մինչ այդ նոյն ներկայութիւնը դժոխք
պիտի ձեւանայ այն ամենուն սրտին մէջ՝

որոնք իրենց մեղքերով պիտի կայնին
Անոր սրբութեան անհուն լոյսին առջեւ:
Վարկեան մը խորհեցէք՝ ճշմարտապէս եր-
ջանիկ կրնա՞ք ըլլալ Մէկու մը ներկայու-
թեան՝ Որուն սէրը մերժած էք և Որուն
Մեծ Զոհը ընդունելու արժանի սեպած
չէք:



ՓՐԿՈՒԹԻՒՆ ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ

կամ

Յանցաւորին հաւնար Անճեղին պատիւ
կրեղը:

Աստուծոյ սէրը մեղաւորին պիտի նե-
րէր, բայց Անոր արդարութիւնը զինք ար-
գիլեց: Դարձեալ, Աստուծոյ արդարու-
թիւնը պիտի դատապարտէր մեղաւորը,
բայց Անոր սէրը զԱյն կեցուց: Անոր
բնածին արդարութեան և նկարագրի էա-
կան սիրոյն իրարու հետ հաշտեցնելը ա-
ռեղծուած մ'էր որ ո'չ մէկ բարոյագէտ
կամ փիլիսոփայ կրցաւ լուծել: Սակայն
աստուածային իմաստութեան ու ողոր-
մութեան ամենաբարձր արտայայտու-
թիւնը այդ լուծումին մէջ^Ե կը գտնուի, որ է
Աստուծոյ Որդւոյն մեղի համար չարչար-
ուիլն ու մեռնիլը:

Պր. Բենագատը կը յարէ. «Բայց Բրիս-
տոնէութիւնը իր հիմէն իսկ ձախողած

չ'ըլլար, երբ ամէն բան փոխարինութեան
վրայ հիմնէ, որովհետեւ փոխարինութիւնը
չի կրնար կանգուն մնալ լուրջ խուզարկու-
թեան մ'առջեւ: Ասով անմեղ Բրիստոսը
պատիւ կրող կ'ընէ մեղաւորին համար և
յանցաւորը ազատ կ'արձակէ: Այս տրա-
մագծօրէն կը հակառակի մեր ունեցած
արդարութեան գաղափարին, որովհետեւ
մենք կը հաւատանք թէ՛ արդարութիւնը
պաշտպանելու է անմեղը և բոլոր պատիւը
բերելու է յանցաւորին վրայ»:

Սակայն տեսէք թէ՛ Աստուծոյ կատար-
եալ արդարութիւնը և առատ ողորմու-
թիւնը ի'նչպէս յայտնուեցաւ խաչին վրայ:
Նա անմեղը առնելով չի ստիպեր որ մե-
ղաւորին պատիւը կրէ: Աստուած հե-
տեւեալ մանրավէպի դատաւորին պէս կը
գործէ: Կ'ըսուի թէ՛ երկու երիտասարդ-
ներ միասին իրաւաբանութիւն ուսանեցան
որոնցմէ մէկը բարձր գիրքի մը տիրացաւ,
իսկ միւսը գինեմոլութեան ենթակայ ըլլա-
լով իր կեանքը պարապի սպառեց: Որ մը՝

այս խեղճ մարդը իր վաղեմի ընկերին առ-
ջեւ բերուեցաւ յանցանքի մը պատճառաւ։
Դատաւարութեան ներկայ եղող փաստա-
բաններ անձկանօք կ'սպասէին տեսնել
թէ՛ նա ի՛նչ վճիռ պիտի տար այսպիսի
շփոթեցուցիչ պարագայի մը տակ։ Ա-
մէնը զարմանքի ենթարկուեցան երբ դա-
տաւորը իր երբեմնի ընկերին տուաւ օ-
րէնքին տրամադրելիք է՛ն ծանր պատիժը,
և յետոյ դարձեալ ինք վճարեց տուգանքը
ու զայն ազատ արձակեց։

Աստուած, Որուն դէմ մեղանշած ենք՝ արդարութեամբ նստած իր դատաւորի աթոռին վրայ, մեղաւորին տուաւ մահուան ամենածանր պատիժը որ նա կըրնար կրել, յետոյ իր ողորմութեամբ Գահէն վար իջաւ ու մեղաւորին տեղը առաւ և անոր պատիժը ինք կրելով կ'ըսէ Բ. Կոր. Ե. 19-ին մէջ թէ՛ Աստուած Գրիստոսի Մէջ էր, և ոչ թէ Անոր Միջոցաւ՝ այլ Անոր Մէջ աշխարհը իր հետ հաշտեցուց։

Հայրն Աստուած, Որդին Աստուած,

Հոգիին Սուրբ Աստուած մէկ Աստուած են։
Այն Աստուածը Որուն դէմ՝ մեղանչեցինք՝
մեզի համար դատապարտութենէ անցաւ,
տուգանքը վճարեց և հիմա մեզի կը շնոր-
հէ ձրի ու լման ներում՝ որ հիմնուած է
կատարեալ արդարութեան վրայ։ Ասոր
համար Պօղոս Առաքեալ կ'ըսէ Հռովմ. Ա.
16, 17-ին մէջ. «Ես ամօթ չեմ սեպեր
Քրիստոսի Աւետարանը, վասնզի ա-
նով Աստուծոյ արդարութիւնը կը
յայտնուի»։ Ես ալ կրնամ ըսել թէ՛
ամօթ չեմ սեպեր Քրիստոսի Աւետարանը,
ինչու որ աշխարհի վրայ ապրող ո՛չ մէկ
մարդ կրնայ պակաս մը գտնել այն արդա-
րութեամբ եղած թողութեան վրայ՝ որ Աս-
տուծմէ մարդուն կը հրամցուի։

Կասառուած Գործ մը: — Սաւայն յաւ-
ւիտենական փրկութեան համար, միայն
Դրիստոսը որպէս Փրկիչ ընդունիլս բաւա-
կա՞ն է: Այո՛, ես այնպէս կը հաւատամ թէ՛
ինդրոյն այնքան պարզ ընկալն է որ զայն ըմ-
բռնելը կը դժուարացնէ: Բանք թէ 100 ոս-

կի պարտք ունիմ մէկուն ու անոր փոխա-
րէն վճարելիք բան մը չ'ունիմ, և երբ բա-
րեկամ մը պարտքս վճարելով ընկալագիրը
ինծի տայ, այլեւս այդ մասին չեմ մաս-
հողուիր, այլ համարձակօրէն կրնամ նայիլ
պարտատէրիս երեսը, որովհետեւ իր ստո-
րագրած ընկալագիրը ձեռքս ունիմ: Երբ
Տէր Յիսուս իր կեանքը տուաւ իմինիս փո-
խարէն. «ըսաւ. ամէն բան կատարուե-
ցաւ», այսինքն՝ քառութեան գործը լրաց-
ցաւ: Աստուած այս կերպով ինձ տուաւ
իր ընկալագիրը, ուրիշ խօսքով, այն վըս-
տահութիւնը թէ՛ ինք գոհացած է Քրիս-
տոսի կատարած գործով, որու ինչան
Քրիստոսը մեռելներէն յարորց երրորդ օրը:

«Բայց ես ատիկա չեմ կրնար հասկնալ»
ըսաւ կահագործ մը, մինչ բարեկամը կը
ջանար խնդիրը իրեն բացատրել: Վերջա-
պէս խորհուրդ մը յղացաւ նա՝ և յղկիչը
վերցուց որ քովի գեղեցիկ կերպով շին-
ուած փայլուն սեղանին ծայրը յղկէ: «Կե-
ցի՛ր, չե՛ս տեսներ՝ ատիկա լրացած գործ

մըն է: Եթէ ատոր վրայ քերիչ գործա-
ծես պարզապէս կ'աւրես զայն» բացառա-
նէց կահագործը: Բարեկամը ատիկէն օդ-
տուած պատասխանեց. «Ճիշտ այդ էր որ
կը ջանայի քեզի ցուցնել Քրիստոսի քաւ-
չագործութեան մասին: Երբ Նա իր
կեանքը տուաւ քեզի համար՝ խնդիրը լրաց-
ցաւ. և երբ ջանաս ատոր վրայ բան մը
աւելցնել՝ խնդիրը կ'աւրես, զՍն եղածին
պէս ընդունէ:— Անոր կեանքը քուկինիդ
փոխարէն տրուած է որ դուն ազատ ար-
ձակուիս»: Նա լոյսի մը պէս տեսաւ ի-
րօրութիւնը և ընդունեց Քրիստոսը իբրեւ
իր Փրկիչը: Դուք ալ չէ՞ք ուզեր ընդունիլ:

Դեռ մեծ դժուարութիւն մը եւս կայ:
— Կը ճանչնամ ազնիւ, ուղղամիտ, բարե-
սիրտ, առատաձեռն տիպար մարդ մը՝ որ
Քրիստոսը որպէս Փրկիչը ընդունած չէր:
Կրնա՞ք ըսել թէ՛ այդ մարդը երբ Յաւիտե-
նականութեան անցնի պիտի կորսուի, մինչ
ուրիշ մը որ լաւ մէկը իսկ չէ՛ քանի՛ որ
Քրիստոսը ընդունած է իբրեւ իր անձնա-

կան փրկիչը՝ Յաւիտեհական կեանք պիտի ունենայ»։ Այո՛, կը խոստովանիմ թէ՛ երկար առէն տալիկա անլուծելի խնդիր մըն էր ինծի, բայց երբ կենսածնունդի (պայօճէնէսիս) Օրէնքը կարգացի՛ր բոլոր զժուարութիւններս անհետացան։ Կենսածնունդի Օրէնքը կ'ըսէ. «Առանց նախընթաց կեանքի՛ կեանք առաջ չի գար»։ Այդ ըսել է թէ՛ ինքնածին կեանք չ'ըլլար։ Մեռած նիւթը չի կրնար ինքնին կեանք առնել. եթէ ան կեանք ստանալու է, հաղորդակցութեան մտնելու է ապրող կեանքի մը հետ։

Քրիստոս կամայական յայտարարութիւն մը չըլլաւ, այլ պարզապէս բացատրութիւն տուաւ գիտական իրողութեան մը՝ երբ ըսաւ. «Մարմինէն ծնածը մարմին է ու Հոգիէն ծնածը հոգի է։ Դուն մի գարմանար որ քեզի ըսի, *պէտք է ձեզի նորէն ծնանիլ*» (Յովհ. Գ. 6, 7)։ Նըմանապէս կ'արտայայտուի առաքեալը. «Այն որ Որդին ընդունած է (ունի)՝ կեանք

ունի, և այն որ Որդին ընդունած չէ (չունի)՝ կեանք չունի»։ Մեր օրուան մեծ սխալը՝ կենսածնունդի Օրէնքէն խոյս տալու ջանքն է։ Բարոյական զարգացում ունեցող մարդուն և Քրիստոնէին տարբերութիւնը, ԱՍՏԻՃԱՆԻՆ մէջ չէ՛, այլ ՏԵՍԱԿԻՆ։ Ասոնց մէկը մարդկային կեանքի բարձր աստիճանը ունի, իսկ միւսը հոգեւոր կեանք։ Տարբերութիւնը բոլորովին արմատական է, մէկը միւսէն չի կրնար ծագում առնել, որովհետեւ Քրիստոս Յովհ. Գ. 7-ին մէջ՝ Նիկողեմոսի պէս բարի մէկու մը ըսաւ. «Պէտք է ձեզի նորէն ծնանիլ» այսինքն, «Ձեր հին բնութեան զարգացումը չի բաւեր, ձեզի պնտք է զիս (Քրիստոսը) ընդունելով ունենալ *աւսուածային նոր կեանք*»։

Խնդիր չէ թէ՛ դիտելու համար աղամանդը ո՛րքան գեղեցիկ է՝ և ո՛րքան անշուք տունկը, բայց ասոնց վերջինը կեանք ունի՛ մինչ առաջինը ո՛րքան ալ փայլեցնէք անկենդան կը մնայ։ Ասոնք բաղդատութեան հիմ չունին, ինչու որ մէկը բան մը

ունի՝ որ միւսը անոր նշոյլն իսկ չունի։
Նմանապէս հոգեւոր մարդու մը և հոգեւոր-
ապէս մեռածի մը միջեւ եղած տարբե-
րութիւնը մեծ է։ Բարոյական փայլը, որ
հոգեւոր կեանքի մէջ ալ կը գտնուի, մար-
դուն հոգեւոր կեանք չի կրնար տալ։ Հո-
գեւոր կեանքի Աղբիւրին հետ շփման գա-
լով է որ մէկը կրնայ կեանք ունենալ, թէ
ոչ, անանցանելի արդելք մը կը կենայ բը-
նական և հոգեւոր կեանքի մէջտեղ։ Կեան-
քի Հոգիին օրէնքը՝ Բրիստոս Յիսուսի
մէջ է (Հռովմ. Բ. 2)։

Հանգանակն եւ բուսական քաղաքաշու-
քանց մէջտեղ եղած դուռը աշխարհի փակ-
ուած է որ՝ ո՛չ մէկ հանգանակի կրնայ գայն
բաժնայ։ Այսինքն, կաւի կտոր մը ինքնին
չի կրնար բարեփոխուելով բոյս մ'ըլլալ, և
որքան ստեն որ բոյսին արմատները վար
երթալով հանքային մասնիկներ չծծեն, յա-
ւիտեան անկենդան կը մնան։ «Այսպէս
ալ բնական մարդէն հոգեւորը եղած դուռը
գոց է, և ոեւէ մարդ չի կրնար դայն բանալ։

Մարմնաւոր մարդուն աշխարհը՝ պատ-
ուարներով բաժնուած է հոգեւորէն, որուն
վրայէն մարդոց կողմանէ ոեւէ մէկը ան-
ցած չէ։ Ո՛չ մէկ մտային ոյժ, ո՛չ մէկ
բարոյական ջանք, և ո՛չ մէկ նկարագրի
բարեշնչում կրնան հոգեւոր կեանքի յատ-
կութիւններով օժտել բնական մարդը»։

Սակայն գոհութիւն Աստուծոյ, Յիսուս
Բրիստոս վար եկաւ վերի հոգեւոր աշխար-
հէն որ մեզի կեանք պարգեւէ։ Կեանք մը՝
որ կախեալ է ուրիշ կեանքի մը յարաբե-
րութենէն։ Ան ինքնիրմէ չի կրնար գո-
յանալ։ Հոգեւոր կեանքը չի կրնար յառաջ
գալ բանէ մը՝ որ հոգեւոր կեանք չ'ունի։
Բրիստոս է հոգեւոր աշխարհի կեանքին
Ակը։ «Ան որ Որդին ընդունած է (ունի)
կեանք ունի, և ան որ Աստուծոյ Որդին
կեանք ունի, (և ան որ ինքզին չէ թէ ուրիշ
ընդունած չէ (չունի)՝ (ինդիր չէ թէ ուրիշ
ինչեր ունի) կեանք չունի» (Ս. Յովհ. Ե.
12), որովհետեւ կեանքի հոգիին օրէնքը՝
Բրիստոս Յիսուսով է (Հռովմ. Բ. 2)։

Կեանք ունեցողներուն եւ անկենդան-

ներում մեջքեղ եղած գիծը՝ բոլորովին կրտուկ է: Բնութեան մէջ երբ ածխածինի, ջրածինի, թթուածինի և բորակածինի մեծած մարմիններ կեանքի հետ շփման մըտնելով ոգեւորին, գործարանաւորումը նախապէս շատ դանդաղ է: Աճումը ժամանակի գործ է, բայց ո՛չ կեանքի: Այն մէկ բողբոջն մէջ երեւան կուգայ, վարկեան մը առաջ ան մեծած էր, իսկ յաջորդին կ'ապրի: Այս դարձ մըն է, ինչպէս Ս. Գիրքը կ'ըսէ. «Մահուանէ դէպի կեանք անցնիլ» մը:

Այս հատուածներէն հետեւողութիւն մ'ընելով ըսենք, բնական մարդը այն վարկեանին երբ վերստին ծնանի, հոգեւոր կեանք մը կը բողբոջէ իր սրտին մէջ (Աւետ. Յովհ. Գ. 1-11): Նա Գրիստոսը կ'ընդունի իբրեւ փրկիչը, բայց դեռ լման զարգացած Գրիստոսեայ մը չէ: Աճումը ժամանակի հոլովումով կ'ըլլայ: Բայց այն պահուն երբ վերստին ծննդեան փորձառութիւնը տնեցաւ, ստացաւ այն լոլոր

օրհնութիւնները՝ զոր Աստուած պատրաստած էր իրեն համար, մեղքերու թողութիւն, հաւատք առ Գրիստոս, փրկութիւն, երրորդութեան գիտութեամբ՝ յաւիտենական կեանք, և գալիք աշխարհի մէջ յաւիտենական փառք:

— Սակայն ի՞նչպէս կրնա՞ր ընդունիլ Տէր Յիսուսը որպէս փրկիչ: Եթէ եփես. Բ. 1-ին համաձայն դիտեմ թէ՛ «յանցանքներու ու մեղքերու մէջ մեծած» եմ Աստուծոյ հանդէպ ունեցած յարաբերութեան տուժոյ հանդէպ ունեցած յարաբերութեան տուժոյ, եթէ հաւատամ թէ՛ Գրիստոսը իր կեանքը տուաւ իմինիս փոխարէն, և եթէ հիմա զԱյն ընդունիմ իբրեւ փրկիչս՝ յաւիտենական փրկութիւն կ'ունենամ: Բայց երբ պաղ ու անտարբեր կերպով, և չհախնդրութեամբ այս իրողութիւնները նկատի առնեմ, յաւիտենական կեանք կ'ունենամ: Ո՛չ, բիւրիցս ո՛չ:

Երբեմն հարուստ, բայց այժմ բոլոր դրամը կորսնցուցած մարդ մը իր ընկերային դիրքը պահելու համար՝ կը համաձայնի

աղջիկը հարուստի մը տալ որ նէ կ'ատէ։ Առաջին առթիւ, աղջիկը բլորովին կը մերժէ առաջարկը, բայց երբ հայրը կը բացատրէ այդ ֆամուսնութեան անհրաժեշտութիւնը՝ թէ բացարձակ չքաւորութենէ ազատելու իր միակ յոյսը այդ է, նէ հաճութիւն կուտայ և պսակի արարողութենէն անցնելով անոր կիներ կ'ըլլայ։ Բայց այդ կիներ ճշմարտապէս անորը եղա՞ւ, ամենայն վստահութեամբ ո՛չ։

Խնդիրը կրցա՞ք հասկնալ չե՞ք։ Երբ այր մը եւ կին մը ճշմարտապէս մէկ ըլլալ կ'ուզեն, զիրար այնպէս սիրելու են որ կրնան մէկգմէկ ընդունիլ իրենց սրտին է՛ն ներքին ծալքերուն մէջ՝ այնքան մտերմօրէն և այնքան ճշմարտութեամբ որ՝ իրարու հանդէպ ունեցած սիրոյ բոլոր զգացումները՝ թերեւս չկրնան խօսքերով լման արտայայտել։

Մեկն ամէն աղ ունիմ աղ ամենա-
ներին առանձնաւորը՝ որը նուիրական է
մեզի։ Հոն սիրոյ զգացումները այնպէս

կը յուզուին՝ որ ո՛չ ոք կրնայ հասկնալ։ Բայց Գրիստոս, Աստուծոյ Որդին, ինծի հանդէպ ունեցած սիրոյն համար, լման իրաւասութիւն ունի հոն մտնելու։ Նա մեր կեանքին մէջ միայն այդ տեղը ունենալ կ'ուզէ։ Այն սէրը զոր մեզի համար ցուցուց՝ Անոր իրաւունք կ'ուտայ այդ մենավայրը ունենալու։ Արդ, այդ տեղը զլանա՞մ Անոր։

Երբ խորհիմ թէ՛ Տիրոջ ինծի հանդէպ ունեցած սէրը այնչափ մեծ էր որ՝ Հօրը փառքը թողլով աշխարհ եկաւ, և մարդկային մարմին առաւ, չարչարուեցաւ, արիւնը թափեց և իմ տեղս մեռաւ որ յաւի-
րենք թափեց և իմ տեղս մեռաւ որ յաւի-
տենական փրկութիւն ստանամ, սիրտս Անոր հանդէպ սիրոյ հրճուանքով կը լեցուի։

Եթէ հիւանդ ու անօդնական անկողնի մէջ պառկած ըլլամ ու այդ պահուն տունը բռնկի, և երբ բարեկամ մը ներս խուժելով բոցերէն զիս պաշտպանելու համար վերմակով մը փաթթէ ու հրդեհէն ազատէ՝ մինչ ինք դէմքին ու բազուկնե-

րուն վրայ վերքեր ստանալով մահուան անկողին իյնայ, սիրտս անհուն սիրով մը պիտի չլեցունի անոր հանդէպ: Այո՛, Տէրը գիտէ թէ ատանկ պիտի ըլլայ:

Հիմա դեմ առ դեմ փրկչիս հետ կը գտնուիմ: Զայն կը տեսնեմ Գեթսեմանիի պարտէզը՝ իր Խաչի մահուան նախօրեակին, յետոյ Պիղատոսի դատական տառանք՝ ուր զինւորները կը ծաղրեն զԱյն ըսելով. «Ողջոյն քեզ, Հրէից թագաւոր», և աստակներ կը վարնեն: Ահա՛, Անոր սուրբ ճակատը կը պսակեն փուշէ պսակով՝ և շուտ մը կ'սկսին գլուխը եղէգով ծեծել: Արիւնլուայ և վիրաւոր ատեանէն Գողգոթայ կը տանին, ուր կոշտ գամեր կը գարնեն Անոր ձեռքերուն ու ոտքերուն: Դեռ ասով ալ չբաւականացած՝ երկու աւազակներու մէջտեղ կը խաչեն որ մեռնի: Միւս կողմէն Անոր շուրջ կը հաւաքուին ծաղրելու, մինչ նա կեանքը կուտայ իրենց փրկուածքէն համար: Եւ երբ կը բացագանչէ. «Հայր թողութիւն տուր ատմաց, վասնդի

չեն գիտեր ի՛նչ կ'ընեն», ա՛յնատեն կը հասկնամ ճշմարիտ սիրոյ լման նշանակութիւնը:

Բայց եթէ կրնանք կարեկցօրէն մտնել Գրիստոսի Փրկիչական տանջանքներուն մէջ, մինչեւ որ արտասուքի կոթիւններ հոսին մեր այտերէն և այդքանը բաւական սեպելով հոն կենանք, խղճալիօրէն պիտի ձախողինք Անոր խաչին բուն նշանակութիւնը ըմբռնելու: Բ. Կոր. Ե. 21-ը մեզի կ'ըսէ. «Աստուած զԱնիկա շէր գիտեր, մեզի չէր գիտեր, մեզի (Գրիստոսը) որ մեղք չէր գիտեր, մեզի համար մեղք ըրաւ»: Խնդրեմ, գլխիկոր համար մեղք ըրաւ», խոնարհ սրտով պահ մը ինձ ընկերաւու խոնարհ սրտով պահ մը ինձ ընկերաւու ցիր և եթէ կրնանք, ջանանք ըմբռնել Անոր Որդւոյն հոգեկան կսկիծները որ «մեզի համար մեղք եղաւ», և Հօր Աստուծոյ, զի համար մեղք եղաւ», և Հօր նողկայ մեղքէ՛ ինչպէս Այն սուրբին՝ որ կը նողկայ մեղքէ՛ ինչպէս մենք բորոտութենէ:

Փրկիչական կազմը որչափ որ զարգացած է՝ այնչափ մեծ է ցաւին աստիճանը, նմանապէս, որքան որ բարձր է նկարա-

գրին բարոյականը՝ նոյնքան ծանր է հոգեկան տանջանքի տարողութիւնը:

Լսած էք երբեք պատկառելի ազնւուականի մը մասին, որ արդարացիօրէն հպարտ է իր յարգուած անուանով: Մէկը՝ որ պիտի նախընտէր աջ ձեռքը կորսնցնել՝ քան զայն անպատուաբեր կերպով գործածել: Անոր որդին, իր միակ ժառանգորդը, կը խոտորի առաքինութեան ճամբէն և գինովցած մէկ պահուն՝ մարդ մը կ'սպաննէ: Դժբախտ ծերունին ալ չի կրնար ուղիղ քալել, զլուխը ամօթէն կը խոնարհի ու հոգւոյն վիշտը՝ տըտմութիւնով դերեզման կ'իջեցնէ իր ալեւոր մագերը:

Եթէ մեզի պէս մարդերու խիստ անպատուաբեր է սովորականէն աւելի մեծ մեղք մը, հապա բացարձակ սուրբ Աստուծոյ մը՝ ինչպէս պիտ' երեւնայ ան իր բոլոր սարսափներով: Հիմա կը հասկնամ թէ՛ Քրիստոս Դեթսեմանիի պարտէզին մէջ մեղքէն նողկալուն համար հոգեկան կըսկիծներու տակ կը գոչէր. «Հայր, եթէ

կ'ուզես, այս գաւաթը ինծմէ անցուր, ո՛չ թէ իմ կամքս հապա քուկդ թող ըլլայ»: Սակայն հակառակ վշտի այդ աղաղակին՝ ունինք նաեւ. «Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մինչեւ իր միածին Որդին տուաւ՝ որ մեզի համար մեղք եղաւ՝ որպէսզի ամէն ով որ Անոր հաւատայ չկորսուի հապա յաւիտենական կեանք ունենայ»:

Այժմ կրնաք հասկնալ թէ՛ ինչու ըսի՝ եթէ ունենայի մարդկային ոեւէ իտէալ, կամ ոեւէ ազնւութիւն, և կամ ոեւէ կարեկցութիւն, պիտի չհամարձակէի մերժել այն սէրը զոր ինծի համար անքան զոհող գտնուեցաւ: Իմացականութիւնս զայն իր բոլոր մասերով քննեց, զգացումներս խորապէս յուզուեցան, անոնք հիմա կը դիմեն կամքիս որոշումին: Աստուծոյ, անձիս ու յաւիտենականութեանս անկեղծ ձիս ու յաւիտենականութեանս անկեղծ գտնուելու համար, միակ բաց ճամբայ մը գտնուեցաւ: Այգտայ որուն անմիջապէս հետեւեցայ: Այսօր Յիսուս Քրիստոս իմ Փրկիչս և Տէրս է:

և ըսէք. — Ո՛հ, Տէր Աստուած, չեմ կրնար
խնդրոյն գաղտնիքը հասկնալ, ոչ ալ ըմբռ-
նել ինծի հանդէպ ունեցած այն սէրդ՝ ո-
րուն իբրեւ արդիւնք Տէր Յիսուսը զրկեցիր
որ մեղքերուս բոլոր պատիժը կրէ։ Բայց
իմ ամբողջ անհասկացողութեամբ յօժար
եմ, և բողոքովիս քեզի կը յանձնուիմ, վըս-
տահելով Փրկչին մահուան իրողութեան և
Քու խոստումիդ՝ թէ «Ամէն ով որ Անոր
հաւատայ՝ պիտի՝ չկորսուի հապա յաւիտե-
նական կեանք ունենայ»։

Մինչ հոսանքին գաղտնիքը մեքենիս-
տին թողլով ինքնաշարժին օգտակարու-
թիւնը կը վայելէք, նմանապէս Աստուծոյ
ձգեցէք փրկութեան գաղտնիքը և անձամբ
օգտուեցէք Փրկչին Հնորհքներէն։ Անոր
հիմա յանձնուեցէք։ Նա կ'ուզէ ձեր սըր-
տին և ձեր կեանքին մէջ մտնել, չէ՞ք ու-
զեր թուլատրել։ Հետեւեալը ըսելով ձեր
խօսքին հաւատարիմ մնացէք. «Ես քու
եմ Տէր Յիսուս, մարմնաւ, շունչս ու հոգիս
Քեզի կը յանձնեմ»։

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Վաղը կ'ուզէ տալ ևս սիրտը Յիսուսի,
եւ փարիզ հաւատքին երկնային.
«Վաղը պիտի՝ խորհիմ յըօրէն յիրաւի,
Ու յանձնեմ իմ կեանքս Փրկիչին»։

«Վաղը կը փանդեմ այն ետը՝ որ հոգիս
կը պահէ դժոխքի մօտ»։
Բառ մը, յոկաւ մը զանց քաւ ևս ըսիւ.
«Այսօր» եր՝ որ անցաւ հանդարտիկ։

«Վաղը» միշտ «Վաղը» որոշում յունէր ևն,
Բայց օրերէն սահեցան մի առ մի.
«Վաղը» միշտ «Վաղը» միշտ «Վաղը» միև-
Հեռացաւ առաջնօրէն կեանքի։ [Եւ որ

եւ ահա ծերութեան ու վշտի արցունքներ,
Սեւ գիր մը գրեցին իր ձակքին.
Եւ մահն ալ իսաւարէն անողով անհաւեր
Մեծ «Հիմա» և որոտաց զայրագին։

ՈՐՈՇՄԱՆ Ա. ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Այն Աստուծոյն առջեւ, որ գիտէ սրբախաւ տմենաներքին գաղտնիքները, Կ՛ԸՆԴՈՒՆԻՄ Յիսուս Քրիստոսը իմ սրտիս մէջ որպէս փրկիչս: Բոլորովին իրեն կը յանձնուիմ, և Յովհ. Ե. 24-ին մէջ գրուած իր խօսքին հեղինակութեամբ կ'ըսեմ թէ՛ յաւիտենական կեանք ունիմ, ինչու որ Տէրը հոն կ'ըսէ. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ ան որ իմ խօսքս մտիկ կ'ընէ, և կը հաւատայ անոր որ զիս զրկեց, յաւիտենական կեանք ունի, ու դատապարտութեան տակ չի յնար, հապա մահուանէ զէպի կեանք անցած է»:

Աստուծոյ վկայ կը բերեմ ստորագրութեանս

Աստուծոյ վկայ կը բերեմ ստորագրութեանս

Թուական Տարիք

ՈՐՈՇՄԱՆ Բ. ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ուրիշ մը կրնայ ըսել. — Այս խնդրոյն շուրջ խորհեցայ, և որոշեցի Մեթոքէ՛, Յիսուս Քրիստոսը որպէս փրկիչս: Զայն մերժելուս պատճառը՝ որ ինձի պիտի պահեմ կեանքիս բոլոր ընթացքին, և իջեցնեմ զայն ինձի հետ գերեզման ու յայտնեմ յաւիտենականութեան մէջ ձերմակ Մեծ Գահին առջեւ, հետեւեալն է. —

Աստուծոյ վկայ կը բերեմ ստորագրութեանս

Աստուծոյ վկայ կը բերեմ ստորագրութեանս

Աստուծոյ վկայ կը բերեմ ստորագրութեանս

Աստուծոյ վկայ կը բերեմ ստորագրութեանս

Աստուծոյ վկայ կը բերեմ ստորագրութեանս

Աստուծոյ վկայ կը բերեմ ստորագրութեանս

Աստուծոյ վկայ կը բերեմ ստորագրութեանս

Աստուծոյ վկայ կը բերեմ ստորագրութեանս

Թուական Տարիք

Սիրելի ընթերցող, եթէ վերջին սարսափելի որոշումը զանց ընելով առաջինը ստորագրելու իմաստով թիւնը ունեցած էք, այս գրքոյկը կրկին կարդացէք, հիմա շատ աւելի հասկնալի պիտի ըլլայ ձեզի: Յետոյ կարդացէք Յովհաննու Աւետարանը սկիզբէն մինչեւ վերջը, ամէն օր գլուխ մը: Կարդացէք նաեւ, «Ապահովութիւն, Վրաստանութիւն, Հրճուանք» խորագրով փոքրիկ թերթօնը:

Որպէս վերջին, սակայն շատ կարեւոր կէտ մը եւս: Եթէ բանաք ձեր Ս. Կրքին Հռովմայեցւոյց գլուխ Ժ. 9 և 10 համարները, հոն պիտի կարդաք «Վասնզի եթէ քու բերնովդ Յիսուսը Տէր խոստովանիս, ու քու սրտիդ մէջ հաւատաս թէ՛ Աստուած զԱնիկա մեռելներէն յարուց, պիտի փրկուիս: Վասնզի սրտով կը հաւատայ մէկը արդարանալու, ու բերնով կը խոստովանի փրկուելու»: Պիտի ըսէք թէ՛ ես Բրիստոսը ընդունեցի, ուրեմն դացէք ու-

րիշի մ'ալ հաղորդեցէք, զԱյն դաւանելու միամէնաք: Ամէնալու բան կա՞յ, իսկ եթէ կ'ամէնաք, ի՞նչ կը խորհիք ձեր մասին: Ենթադրենք թէ՛ նաւամատոյց իյնալով

այնպէս վնասուեցայ որ չկրցայ լողալ, սակայն ածուխի բանւոր մը որ նաւուն մէջ կը դործէր, ծով նետուելով զիս ազատեց: Եթէ ամիս մը վերջ մեր քաղքին մեծ պողոտայէն իմ վար իջնելս տեսնէք, և միեւնոյն ածխադործին վեր ելլելը՝ բոլորովին մրոտած վիճակի մէջ, եւ եթէ տեսնէք թէ՛ անոր դալը տեսնելէ յետոյ բացէ ի բաց ետ դարձայ խանութի մը ցուցափեղկին նայելու որ չըլլայ թէ զինք բարեւեմ, քանի որ կ'ամէնայի հոն անոր հետ խօսելու՝ որպէսզի մարդիկ զիս այդպիսի մէկու մը հետ շտեմնէին: Այս պարագային ի՞նչ պիտի խորհիք իմ մասին:

Դուք ստորագրեցիք ձեր անունը ըսելով թէ՛ կը հաւատաք Տէր Յիսուսի՝ որ իր կեանքը տուաւ ձեզ փրկելու համար: Առիթներ պիտի ներկայանան երբ Անոր հետ

դէմ սու պէմ պիտի գաք անոնց հետ՝ որ
զՍյն կ'ատեն։ Ամհնալով ուրիշ կողմ պի-
տի նայի՞ք, թէ ո՛չ, զՍյն թէ՛ խօսքով և թէ՛
գործով երկուստէք պիտի պատուէք որպէս
ձեր Տէրը ու Փրկիչը։ Եթէ ճշմարտապէս
սիրեցիք Զինք որ ձեզ սիրեց, պէ՛տք է ը-
նէք այս բանը և պիտի ընէք ալ։

Բառերուս ընտրութիւնը կրնայ սխալ
ըլլալ մերթ, բայց այս էջերուն վրայ պատ-
կերացուած ճշմարտութիւններուն համար
ոեւէ շատագոյնք չ'ունիմ։ Զանազան
եմ գրել ինչ որ կը հաւատամ թէ Աստուած
կ'ուզէր որ զրէի՝ Իրեն և ձեզի հանդէպ
պարտականութիւնս կատարելու համար։
Արդ, գրքոյկիս կը հետեւի՝ չերմեռանդ-
ազօթքներով որ Աստուած անոր միջոցաւ
խօսի ձեզի՝ ձեր յաւիտենական բարօրու-
թեան համար։

Ձերդ Անկեղծաբար
Ր. Ա. Լէյսլօ

ԶԻՆԻՈՐԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Անգամ մը կը շանայի զինուոր մը Տէր
Յիսուսը ընդունելու առաջնորդել։ Սա-
կայն ինչպէս շատերը սովոր են ընել՝ ան-
միջական որոշումէ խոյս տալու համար ը-
սաւ. «Այդ մասին պիտի խորհիմ»։ Ըսի
իրեն. «Խնդիրը լուսաբանեմ քեզի Հէնրի։
Դիցուք թէ՛ գիշեր մը ընկերներուդ հետ
թշնամիին խրամները ասպատակեցիք և
վերադառնալու ատեն քեզ վիրաւորեցին։
Ընկերդ Պիլ Սմիթն անմիջապէս կանգ առ-
նելով քեզ վերցուց ձեր խրամները փոխադ-
րելու, և իր այս աշխատանքին փոխարէն
երկու զնդակ ստացաւ ետեւէն։ Երկուքդ
ալ հիւանդանոց փոխադրուեցաք, և գուր-
բուրալի խնամքներու շնորհիւ մահուան
երկիւղներէն ազատուեցաք։

Երկու ամիս յետոյ բժիշկը կ'ուզայ
օգնելու թշուառ հիւանդի մը որ գէշ կեր-
պով կը կաղայ և շատ դժուարութեամբ կը

շարժի: Անոնք քովդ կուգան ու բժիշկը
կ'ըսէ. «Հէնրի, կ'ուզեմ քեզ ծանօթացնել
Պր. Սմիթին, այն մարդը որ իր կեանքը
վտանգեց քեզ փրկելու համար», իսկ դուն
ձեռքերդ ծալած կը պատասխանես. «Ձեմ
դիտեր թէ՛ այսօր կրնամ անոր հետ ծա-
նօթանալ, այդ մասին պիտի խորհիմ»:
Այդպէս պիտի չսես Հէնրի՝ չէ՞, այլ անոր
ձեռքը սեղմելով իրեն հանդէպ ունեցած
երախտագիտութիւնդ պիտի յայտնես:

Այս իրիկուն կ'ուզեմ քեզի ծանօթացնել
Տէր Յիսուսը, իր փառքէն մերկացող Աստ-
ուածը, որ ո՛չ միայն իր կեանքը վտանգեց,
հապա զայն զոհեց քեզ փրկելու համար,
Բայց դուն կունակդ Անոր դարձնելով կ'ը-
սես. «Պիտի խորհիմ այդ մասին»: «Ո՛հ»,
ըսաւ նա. «Պիտի ընդունիմ զԱյն»: Մի-
ասին ծունկի եկանք, և այդ վարկեանէն
սկսեալ նա ընդունեց Տէր Յիսուսը որպէս
իր փրկիչը:

«Այս մասին դեռ պիտի խորհիմ» կ'ը-
սէք սիրելի ընթերցող, թէ ոչ, խնդրեք ըզ-

գուշութեամբ նկատի առած և զինուոր բա-
րեկամիս նման՝ շիտակ որոշում տուած էք:
Բ. Ա. Լ.

* * * * *

Այս գրիչկին ընթերցումը սուսցնոր-
դե՞ց ձեզ Քրիստոսը ընդունելու: Եթէ այս
մասին տակաւին չհասկցած բաւ ևր ունիք,
ագաս զգացե՛ք գրեք հետեւեալ հասցէին եւ
մենք հաճոյքով պիտի քանակ ձեզի օգնեք:

The "N. E. S. T."
P. O. Box 632,
Jerusalem, Palestine





ՀՀ Ազգային գրադարան



NL0151124

25

Printed by
**The "Near East
Scripture Testimony" Press**
Box 632, Jerusalem.
Copies Free